Գյումրին Նիկոլ Փաշինյանին չընդունելու մի շարք պատճառներ ունի, Միքայել սրբազանի կալանավորումից մինչեւ Վարդան Ղուկասյան: Այնպես չէ, որ Գյումրիում այդ ամենը մոռացել են եւ այսօր պետք է գրկաբաց ընդունեին: Նիկոլ Փաշինյանի այցը հերթական շոուն էր, հույսները անձրեւն էր, բայց հակառակի պես անձրեւ էլ չեկավ:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանի իմիջի «վերագործարկման» հետեւում ամերիկյան Edelman PR գործակալությունն է, որը մասնագիտացած է «թունավոր» քաղաքական գործիչներին «մարդկայնացնելու» գործընթացում: Ըստ այդ մոտեցման՝ սննդի հետ կապված դրվագները պատահական չեն ընտրվում, քանի որ սնունդը դիտարկվում է որպես մարդկանց միավորող գործոն:

Կարդացեք՝ էջ 5

Պուտինն ասաց, չէ՞, որ ԵԱՏՄ-ից դուրս գալն ինչ խնդիրներ կառաջացնի, հիմա նույնը կարող է անել Իրանը: Այսինքն, իրավիճակը շատ ավելի բարդանում է տարածաշրջանում, որովհետեւ դա կնշանակի վերաբերմունքի, հարաբերությունների փոփոխություն Հայաստանի հետ եւ ինքնըստինքյան հարեւանների, օրինակ, Ադրբեջանի եւ Թուրքիայի:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 65 (4200), 21 ապրիլ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Կիրակի օրվա ավտոերթի եւ համերգի ամենաքննարկվող դրվագն Աննա Հակոբյանի հայտնությունն էր: Նա փետրվարին հայտարարեց, որ իրենց քաղաքացիական ամուսնությունը դադարել է՝ հեռանում է կառավարական առանձնատնից, եւ իր դառը կյանքի մասին սրտաճմլիկ պատմություն պատմեց: Իսկ կիրակի օրը մարդիկ տեսան նրա սիլուետը ամուսնու առավոտվա լայվում՝ կառավարականում, ապաեւ մասնակցեց Գյումրիի միջոցառմանը. Փաշինյանի ձեռքը բռնած՝ քայլում էր քաղաքում, արհամարհում լրագրողների հարցերը: Եվ, հակառակ խոստմանը, որ հրաժարվում է «ախրաննիկներից», շրջում էր ՊՊԾ աշխատակիցների ուղեկցությամբ: «Վերամիավորվե՞լ եք» հարցը նրանք անպատասխան թողեցին: Տեղեկացանք, որ անգամ Փաշինյանի թիմակիցները չեն հանդգնել ճշտել դա: Մեզ ասացին, թե իրենք 1 շաբաթ առաջ են իմացել, որ Աննան վերադարձել է կառավարական առանձնատուն: Իսկ թե ինչ կարգավիճակով, չգիտեն: Իրենք էլ են տարակուսած զույգի այս թատրոնից: Ցուցադրական բաժանությունից հետո տարբեր վարկածներ էին քննարկվում: Ամենատարածվածն այն է, որ Փաշինյանը փորձում է ազատվել Աննա Հակոբյանի բացասական ռեյտինգից: Հիմա կարծում են՝ պատճառն այն է, որ տիկնոջ գլխավորած «Իմ քայլը» հիմնադրամը նախընտրական փուլում շարունակի անարգել բարեգործությամբ զբաղվել: Կերակրող մայր Գոհար Ղումաշյանին ձերբակալեն հեռախոսային մի խոսակցության համար, իսկ Աննա Հակոբյանը շռայլորեն բարեգործություն անի եւ չպատժվի:

Շաբաթ օրը Էդմոն Մարուքյանի «Լուսավոր Հայաստան» կուսակցության համագումարն էր, հայտարարվեց, որ մասնակցելու են ընտրություններին, եւ հրապարակվեց նախընտրական ցուցակի առաջին հնգյակը, որտեղ տարօրինակ կերպով չկար ԼՀԿ փոխնախագահ Դավիթ Խաժակյանը: Տեղեկացանք, որ նա ընդհանրապես չի լինելու ցուցակում: Ավելի վաղ գրել էինք, որ Մարուքյանի թիմն ընտրություններին մասնակցելու հարցում միակարծիք չէ, ոմանց համոզմամբ՝ իրենք ավելի շատ վնասելու են իշխանափոխության գործընթացին, քան օգնելու, եւ իմաստ չունի միայնակ մասնակցել, Խաժակյանն այդ թեւում է եւ այդ պատճառով է հրաժարվել: Երեկ նա փորձեց այլ կերպ մեկնաբանել. «Այս փուլում ունեմ աշխատանքային ծանրաբեռնվածություն եւ որոշել եմ չմասնակցել ընտրություններին՝ որպես պատգամավորի թեկնածու»: Մեր տեղեկություններով, այդուհանդերձ, որպեսզի թիմին չվնասի, նա չի խզելու կապը կուսակցության հետ եւ լինելու է կուսակցության լիազոր ներկայացուցիչ՝ հարցազրույցներ է տալու, բանավեճերի է մասնակցելու:

5 տարին մեկ

Որ կողմ շարժվում ես՝ մայրաքաղաքը մաքրող, ծառ տնկող, մայթերն ու փողոցները նորոգող մարդիկ են: Պոլիկլինիկաներում ու հիվանդանոցներում անվճար բուժվող քաղաքացիների հերթեր են: Պետական հիմնարկների հետ գործ ունեցող քաղաքացիներն ասում են՝ այն հարցերը, որոնց լուծման համար առաջ ամիսներ էին պահանջվում, հիմա օրերի ընթացքում են լուծվում: Հոսանքի ու ջրի անջատումներն են նվազել: Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցներն ամբողջ օրը հասարակ մարդկանց հետ են շփվում, գյուղեր են գնում: Հարգալից խոսում են տատիկ-պապիկների հետ: Եթե մի սխալ բան են ասում, անմիջապես ներողություն են խնդրում: Տիգրան Ավինյանը ծառատունկ է անում, Սուրեն Պապիկյանը սրտիկներ է ցույց տալիս, ՔՊ-ականներն ամեն օր լայվեր են անում, ներկայացնում են կառավարության որոշումները: Մանկապարտեզներ ու դպրոցներ են այցելում, կոնֆերանսներ են անում, դրսից հյուրեր են ընդունում: Ո՞ր մեկը թվարկեմ: Օրինվեն ընտրություն հորինողի անցավորները՝ ճրբ էինք մենք այսքան հասարակ, ջանասեր իշխանություններ տեսել: Ափսոս, որ հաճախ չեն, եւ սա շատ կարճ է տեւելու՝ մի 30 օր: Հունիսի 6-ին այս ամենը՝ քըրթ կավարտվի: Եվ նման ջանասեր աշխատանք մեկ էլ կտեսնենք 2031 թվականին: Իսկ թե ինչ՞ր կտեսնենք առաջիկա 5 տարին, եթե այս իշխանությունը կարողանա քվե կորզել նախընտրական քարոզչության զոհ դարձած հանրությունից, մարդ անգամ վախենում է պատկերացնել: Այս ասֆալտի ամեն սանտիմետրը, յուրաքանչյուր վիրահատությունն ու անվճար տրամադրված դեղը ընտրողի քթից են բերելու: Ոչ միայն այդ ամենը դադարեցվելու է եւ մոռացվելու, այլեւ մեր թշնամու առաջ այնպիսի զիջումների են գնալու սրանք, այնպես են ոչնչացնելու հայի արժանապատվությունն ու ինքնությունը, որ 5 տարի անց մեր ազգից ու պետությունից հուշ մնա:

Շաբաթ օրը Նիկոլ Փաշինյանն այցելել էր Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ ծանոթանալու նորոգման աշխատանքներին: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակիցները, մարտական տրամադրված, սպասել են, որ նրա դեմքին ասեն իրենց դժգոհությունները՝ կապված Էդիտա Գզոյանի սկանդալային հրաժարականի եւ նոր տնօրենի նշանակման հետ, սակայն հանդիպումը չի կայացել՝ Փաշինյանը չի մտել թանգարան: Թաշչյանն արդեն կրճատել է տարբեր ծրագրերի ֆինանսավորումը, արգելում է մասնակցել միջազգային միջոցառումներին՝ ասելով, որ դրա ժամանակը չէ: Բայց Փաշինյանի այցից առաջ տարածքի մաքրությանն ու աղբամանները դատարկելուն անձամբ է հետեւել: Այցի օրը ինստիտուտի «Ժանսեմ» պատկերասրահում «Ինքնություն, հիշողություն եւ վերապրում. հայ երեխաները՝ ցեղասպանության ընթացքում» ցուցադրության բացումն էր նաեւ, որը նույնպես չի գրավել Փաշինյանի ուշադրությունը:

ԻՆՔԸ՝ ՍԱՐԻԿԻՆ, ՍԱՐԻԿԸ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

Թեեւ օրեր առաջ Նիկոլ Փաշինյանից պետական ապարատին եւ իր թիմակիցներին հրահանգ էր իջեցվել հուժկու ավտոերթ, ապա եւ՝ Գյումրիում համերգ-հանրահավաք կազմակերպելու մասին, սակայն իշխանության մեր աղբյուրները պատմում են, որ ավտոերթի ու համերգի արդյունքներից Փաշինյանը հերթական անգամ հավասարակշռությունը կորցրել է եւ շան լափ թափել պատասխանատուների վրա: Հատկապես զայրացել է նրանից, որ Գյումրուց եւ հարակից համայնքներից գրեթե մարդ չի մասնակցել միջոցառմանը: Լավագույն հաշվարկներով՝ 100-200 տեղացի է եղել, ամբողջ բազմությունը Երեւանից իր հետ գնացածներն ու մարզպետների հավաքագրած մարդիկ են եղել: Գյումրիի Վարդանանց հրապարակում կայացած համերգից հետո Փաշինյանը եւ ՔՊ ակտիվը հավաքվել են «Յաղլա» սրճարանում կամ, ինչպես գյումրեցիներն են ասում՝ «յաղլանոցում», եւ բուռն քննարկում է եղել: Փաշինյանն ամենավերջին խոսքերն է ասել թիմակիցներին եւ մանավանդ Գյումրու ներկայացուցիչներին: Ամենից շատ բաժին է հասել Սարիկ Մինասյանին, որ գոնե մի հազար մարդ չի կարողացել հավաքել: Ասել է, որ հրապարակում գտնվողներին ինքը դեմքով ճանաչում է՝ իր մշտական ուղեկիցներն են, որ տարբեր միջոցառումներին լինում են, «դուք մի մարդ չեք կարողացել բերել»: Սարիկին էլ նախատել է՝ Գյումրու ՀԷՑ-ի մասնաճյուղը դրել ենք «տակդ», չես կարողանում մարդ բերել: Ասում են՝ այս խոսակցությունից «մեր Սարիկն» այնքան է վատացել, որ դրանից հետո է ֆեյսբուքում բաց տեքստով հայհոյանք գրել իրենց քննադատող քաղաքացու հասցեին:

ՀԱՅԵՏ

ՈՐՊԵՍԶԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՉՓՉԱՆԱ, ՄԻԱՆՈՒՄ ԵՄ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Օրերս տեղի է ունեցել Արման Բաբաջանյանի «Հանուն հանրապետության» կուսակցության արտահերթ համագումարը, որի ընթացքում, օրենքի պահանջի կատարմամբ՝ հաստատվել են առաջիկա Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության

պատգամավորության թեկնածուների առաջին 30 անունները: Ցուցակը գլխավորում են կուսակցության նախագահ Արման Բաբաջանյանը, կուսակցության փոխնախագահ Ռուբեն Մեհրաբյանը եւ անկուսակցական փաստաբան Լուսինե Զեյնալյանը: Ցուցակում ընդգրկված են նաեւ Գերագույն խորհրդի պատգամավոր Ազատ Արշակյանը, ազատամարտիկներ Վարդան Մալխասյանը եւ Վլադիմիր Առաքելյանը, առողջապահության նախկին փոխնախարար Թաթուլ Հակոբյանը, «Հանուն հանրապետության» կուսակցության վարչության անդամ Առնոլդ Բլեյանը, ինչպես նաեւ՝ հանրային եւ քաղաքական մի շարք գործիչներ: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է ԳԽ պատգամավոր, սովետական տարիների քաղբանտարկյալ **Ազատ Արշակյանի** հետ:

- Ինչպե՞ս որոշեցիք միանալ այս թիմին եւ մասնակցել ընտրություններին: Դուք մոտ 30 տարի պատգամավոր չեք եղել, որեւէ կուսակցության անդամ չեք: Ի՞նչ ակնկալիքներ ունեք այս ընտրություններից:

- Պատմությունը գալիս է Եվրաքվեից: Այդ ժամանակ դեռ ինձ հրավիրեցին կուսակցությունների ղեկավարները՝ Խզմալյանը, Խուրշուդյանը, Բաբաջանյանը եւ Սարգսյանը եւ ասացին իրենց նախաձեռնության մասին, ես էլ նրանց սիրով աջակցեցի: Հետո գաղափար առաջացավ, որ այդ թիմը պետք է նաեւ ԱԺ ընտրություններին մասնակցի: Սկզբում ես ինքնաբացարկ հայտնեցի, ասացի, որ տարիքս առած մարդ եմ, հավես չունեմ եւ այլն, սակայն ամիսներ անցան, Հովսեփ Խուրշուդյանն ու Տիգրան Խզմալյանն ինձ ասացին, որ իզուր եմ հրաժարվում, քանի որ խմբով ունենք որոշակի վարկանիշ: Ես ասացի՝ այո, որպեսզի համախմբվածության գաղափարը չփչանա, ես էլ կմիանամ ԱԺ ընտրություններին: Արամ Սարգսյանն ինձ հետ քննարկում ունեցավ եւ ասաց, որ Եվրաքվեում ստացված արդյունքը չի ստացվի ԱԺ-ի պարագայում, եթե բոլորս միասին մասնակցենք ընտրություններին: Նա ասաց, որ մեր համակիրները շատ տարբեր են, եւ միասին լինելով ավելի շատ կորցնում ենք, այլ ոչ թե շահում: Նա ասաց, որ մենակ է գնալու ընտրություններին: Պայմանավորվեցինք, որ իրար չենք խանգարելու:

- Ի՞նչը միավորեց ձեզ՝ հակառուսականությունը:

- Ոչ թե հակառուսականությունը, այլ՝ ԵՄ-ն մեզ միավորեց, հակառուսականությունն ածանցյալ է:

- Իսկ Տիգրան Խզմալյանն ինչո՞ւ է առանձնացել ձեզնից:

- Այո, մենք երեքով ենք մնացել: Խուրշուդյանը, Արման Բաբաջանյանը եւ ես: Հ. Խուրշուդյանն իր միասնականության ծրագիրը ներկայացրեց, Արման Բաբաջանյանն ասաց, որ համաձայն է: Որոշվեց, որ ցուցակը պետք է կազմվի ոչ թե կուսակցականներից միայն, այլեւ ինձ նման մարդկանցից եւս: Ես, Լիլիթ Դալլաքյանը եւ այլն: Արման Բաբաջանյանն ասաց, որ համակարծիք է մեզ հետ, ասաց՝ տեղերը բաժանեք դուք՝ ինքներդ: Ինձ որպես տեղապահ գրեցին առաջինը: Մանավանդ որ ես ամբիցիոզ չեմ:

- Ի՞նչ շանսեր ունեք:

- Շանսերն այնքան են, որքանով: Այս կռվում պայքարն ինձ թող լինի հոնորար:

ԲԱՑԱՌՈՒՄ ԵՄ, ՈՐ ՍՄԲԱՏ ԼՊՈՒՏՅԱՆԸ ՈՐԵՎԷ ԿԵՂԾԻՔ ԿԱՏԱՐԱԾ ԼԻՆԻ

Ապրիլի 18-ին Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալել էր Մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանին եւ նրա որդուն: Պրոռեկտորը եւ որդին անցնում են ենթադրյալ կեղծիքի վարույթի շրջանակներում: Ըստ մեղադրանքի, պրոռեկտորի որդին աշխատանքի չի հաճախել, բայց աշխատավարձ է ստացել: Նույն գործի շրջանակում ձերբակալվել էր նաեւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր-տնօրեն, գրոսմայստեր, Հայաստանի շախմատի հավաքականի անդամ, Հայաստանի քառակի եւ շախմատի օլիմպիադայի չեմպիոն Սմբատ Լպուտյանը:

Լենգենդար շախմատիստին իրավապահները մեղադրում են այն բանում, որ նա, լինելով Շախմատի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, որը Մանկավարժական համալսարանի կազմում է գործել, պրոռեկտոր Իսպիրյանի որդուն թույլ է տվել աշխատանքի չներկայանալ՝ նրա փոխարեն ինչոր փաստաթղթեր է ստորագրել: Հակակոռուպցիոն կոմիտեն դա գնահատել է որպես պաշտոնեական կեղծիք եւ հայտնի գրոսմայստերին ձերբակալել: Լպուտյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելու մասին ստորագրությունը:

Մանկավարժական համալսարանի նախկին ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց՝ բացառում է, որ Լպուտյանը կեղծիք կատարած լինի. «Նա լավագույն մարդկանցից է, նշանավոր գործիչներից է, միջազգային գրոսմայստեր է, իր կողմից կոռուպցիոն բնույթի որեւէ գործողություն ես բացառում եմ»:

Միրզախանյանը նշեց, որ Մարիամ Իսպիրյանն իր օգնականն է եղել, նրա մասին էլ կարող է միայն դրականն ասել. «Ինչքան ես գիտեմ, մեղադրանքները կապված են իր որդու աշխատանքի ընդունման հարցի հետ, որ ընդունված է եղել՝ աշխատանքի չի գնացել կամ մասնակի է գնացել: Իմ տեղեկությունները մամուլից են, այլ տեղեկություններ չունեմ: Ես 5 տարի է՝ մանկավարժականի հետ աշխատանքային առնչություն չունեմ, բայց 40 տարի աշխատել եմ, եւ ինձ մոտ շատ ջերմ հիշողություններ են՝ կապված կոլեկտիվի հետ: Մենք Լպուտյանին նախեւառաջ հրավիրեցինք որպես Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչ, եւ նա պաշտոնները զուգակցում էր»:

Խոսելով Շախմատի գիտահետազոտական կենտրոնի մասին՝ նախկին ռեկտորը նշեց, որ այն բացվել է 2017 կամ 2018 թվականին. «Ես այդ ժամանակ ռեկտոր էի, դա յուրահատուկ կենտրոն է, որը միջազգային ռեզոնանս առաջացրեց: Ինչպես հայտնի է՝ մենք առաջին դիրքերում ենք, որ շախմատը մտել է դպրոցական ծրագիր: Այդ կենտրոնը ստեղծվեց Մանկավարժական համալսարանում, բացումը բավականին մեծ շուքով տեղի ունեցավ, մասնակցում էր ֆեդերացիայի նախագահը, որը նաեւ հանրապետության նախագահն էր, նաեւ՝ Ռադիկ Մարտիրոսյանը: Այդ կենտրոնը կազմակերպել է մի շարք կոնֆերանսներ, որոնց մասնակցում էին տասնյակ երկրների ներկայացուցիչներ, եթե չեմ սխալվում՝ կան երկրներ, որտեղ շախմատը կրթական ծրագրի մաս է կազմում, եւ այդ ամեն ինչը սկսվել է Հայաստանից: Հայաստանը եղել է եւ կա շախմատի գերպետություն»:

2020 թվին հերոս էր, հիմա հետախուզվում է

ՀՀ զինվորական դատախազությունը երրորդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ Գրիգորի Խաչատուրովին կրկին կալանավորելու միջնորդություն է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան՝ բողոքարկելով առաջին ատյանի որոշումը, որով մերժվել էր կալանքը: Վերաքննիչը բավարարել է այն: Գլխավոր դատախազությունից «Հրապարակ»-ին պատասխանեցին, որ այդ որոշման հիման վրա Խաչատուրովի նկատմամբ հետախուզում է հայտարարվել. «2025 թվականի դեկտեմբերի 25-ին մեղադրյալ գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը»: Ինքը՝ Խաչատուրովը, արդեն տեւական ժամանակ Հայաստանում չէ: Գրիգորի Խաչատուրովի պաշտպան **Միհրան Պողոսյանը** միայն հաստատեց, որ իր պաշտպանյալը երկրում չէ, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ էլ նշեց, թե դա այդպես չէ՝ չմանրամասնելով, թե ինչ նկատի ունի:

Գեներալ-մայորին մեղադրանք է առաջադրվել կաշառք տալու եւ պատերազմի ժամանակ իշխանազանցության ու իշխանությունը չարաշահելու հոդվածներով: Մեկ այլ քրեական գործով նրա նկատմամբ որպես խափանման միջոց են կիրառվել գրավը եւ վարչական հսկողությունը:

ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար, Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Յուրի Խաչատուրովի որդին մեկ այլ գործով էլ է անցնում, որի քննությունն այժմ դատարանում է: Այս գործով անցնում է նաեւ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը, մեղադրվում են փողերի լվացման համար: Այս գործով գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը մտել էր ԱԺ: Ըստ մեղադրանքի, Օհանյանը վաճառել է ՊՆ-ին պատկանող գույքը շուկայականից մի քանի անգամ ցածր գնով: Խոսքն Արարատի մարզի Արմաշ համայնքում մի լքված զորամասի մասին է, որը 4 միլիոն դրամով վաճառվել է հրամանատար Գրիգորի Խաչատուրովի ընկերոջը: Հիշեցնենք, որ գեներալ-մայոր Խաչատուրովը 44-օրյա պատերազմից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջած մոտ 4 տասնյակ բարձրաստիճան զինվորականներից էր: Այդ պահանջից ամիսներ անց նրան ազատեցին երրորդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից եւ սկսեցին քրեական հետապնդում իրականացնել: Իսկ 2020 թվականի օգոստոսին՝ պատերազմից մոտ մեկ ամիս առաջ տեղի ունեցած տավուշյան մարտերի համար վարչապետի միջնորդությամբ Խաչատուրովը պարգեւատրվել էր «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով: Նա համարվում էր տավուշյան ռազմական գործողության գլխավոր հերոսներից մեկը:

Նյութերը՝
Աննա
ՊԱՊԻԿՅԱՆԻ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՓԱԶԼԸ ՀԱՎԱՔՎԵԼ Է. ԻՆՉ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ԿԱՆ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՑ

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Հունիսի 7-ին սպասվող հերթական ընտրություններին ընդառաջ, Հայաստանում արդեն ուրվագծվում է նախընտրական փազլը, ակնհայտ են դարձել գլխավոր մրցակիցները: Սակայն իրենց մասնակցության մասին հայտարարածների ցանկը չի ուրախացնում ընտրողներին: Կար սպասում, որ այս ընտրություններին ընդդիմությունը կմասնակցի մի քանի խոշոր ճակատով, վատագույն դեպքում՝ 4, եւ հետընտրական գործընթացները կզարգանան Գյումրու սցենարով, ու ընդդիմադիրների հավաքական քվեով իշխանություն կձեւավորեն, սակայն անցողիկ շեմի հետ ակնհայտ խնդիրներ ունեցողների, ընտրաձայները փոշիացնողների եւ դրանով իշխանության ջրաղացին ջուր լցնողների պակաս այս անգամ էլ չի զգացվում, ինչն առավել մեծացնում է Նիկոլ Փաշինյանի շանսերը: Բանն այն է, որ փոշիացած քվեների առյուծի բաժինն անցնելու է ամենաշատ ձայն ստացած ուժին, եւ եթե վարչական ռեսուրսի շնորհիվ ՔՊ-ն լինի առաջինը, ուրեմն նրան էլ բաժին կհասնի ամենաշատ ընտրափոշին:

Նախ արձանագրենք, որ իշխանական քարոզչության շնորհիվ ընտրողն այս անգամ էլ ստիպված է լինելու ընտրել «ներկաների» եւ «նախկինների» միջեւ: Երկրում քաղաքական դիսկուրսն այդպես էլ չփոխվեց, թեպետ խաղի մեջ է մտել գործարար Սամվել Կարապետյանը՝ իր «Ուժեղ Հայաստան» նորաստեղծ կուսակցությամբ: Թվում էր՝ պետության համար բոլոր ժամանակներում մեծ ներդրումներ կատարած միլիարդատերը կդիրքավորվի նախկինների ու ներկաների արանքում, սակայն Նիկոլ Փաշինյանն ամեն ինչ արեց, որ նրան տեղափոխի նախկինների դաշտ եւ ներկայացնի որպես պատերազմի մունետիկ՝ պատերազմի եռագլուխ ուժեր, խոսքը Ռոբերտ Քոչարյանի առաջնորդած «Հայաստան» դաշինքի եւ Գագիկ Ծառուկյանի ԲՀԿ-ի՝ ներկայում «Առաջարկ Հայաստան» կոչվող պլատֆորմի մասին է:

Նիկոլ Փաշինյանի առաջնորդած «Քաղպայմանագիրը» երեկվա դրությամբ միակն էր, որ ԿԸՀ է ներկայացրել ընտրությունների առաջադրման փաստաթղթերը: Մյուսներն ընդամենը հայտարարել են առաջադրման մտադրության մասին: Ինչ շանսեր ունի երբեմնի հեղափոխական առաջնորդը. հարցի պատասխանը շատերին է տեսանելի՝ ոչ միայն բազում սոցհարցումների՝ իրենց համար նվաստացուցիչ արդյունքներից, այլեւ իշխանական միջոցառումներից, վկան՝ կիրակնօրյա ավտոերթն ու Գյումրիում կազմակերպված համերգը, որին վարչական լծակների կիրառմամբ հազիվ կարողացել էին, ըստ լավագույն հաշվարկների, 4-5 հազար մարդ հավաքել:

Ընդդիմադիր առաջնորդությունն այս ընտրություններին անառարկելիորեն վերցրել է Սամվել Կարապետյանը, հաջորդում է Ռոբերտ Քոչարյանը, տարբեր հարցումներ վկայում են, որ Գագիկ Ծառուկյանն էլ անցողիկ շեմը կհաղթահարի, հնարավոր է, որ Արման Թաթոյանն էլ մոտենա այդ շեմին, իսկ մյուսներն ակամայից կարող են նպաստել Փաշինյանի վերարտադրությանը: Արեւմտամետ թեւը թերեւս հենց այդ հաշվարկով է խաղի մեջ մտնում՝ Արամ Սարգսյանի «Հանրապետություն», Արման Բաբաջանյանի շուրջ միավորված քաղհասարակության ճակատը, Գուրգեն Սիմոնյանը՝ Էդուարդ Անտինյանի հետ, որպեսզի եթե անգամ չհաղթահարեն շեմը, փոշիով աջակցեն Նիկոլ Փաշինյանին: Սակայն անհասկանալի է դաշտում ընդդիմադիր դիրքավորվածների դիրքորոշումը:

Փորձագետների գնահատմամբ, շեմը հաղթահարելու լուրջ խնդիր ունեն ՀԱԿ-ը, Էդմոն Մարուքյանի «Լուսավոր Հայաստանը», նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի «Նոր ուժը» եւ նմանատիպ այլ ուժեր, որոնք սնկի պես աճում են: Անգամ եթե քաղաքական այս ուժերի ներկայացուցիչներն անկեղծ ընդդիմություն են եւ իսկապես ուզում են Փաշինյանի իշխանազրկումը, սակայն հարցումները վկայում են, որ նրանց շանսերը մեծ չեն, եւ ընտրություններին մասնակցությունը դարձրել են իրենց կյանքի իդեաֆիքսը: Ընտրություններին չի մասնակցում երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը: Սակայն նրա թիմն էլ է կարծես որոշել օգնել Նիկոլ Փաշինյանին: Այն, որ ընդդիմադիր դաշտի չբյուրեղանալու դեպքում գոնե միմյանց չհարվածելու, հակաքարոզչություն չանելու պայմանավորվածության չկարողացավ հանգել:

Հայաստանում նախընտրական արշավը դեռ պաշտոնապես չի մեկնարկել, սակայն դա չի խանգարում քարոզարշավ իրականացնելուն, ավելի ճիշտ՝ միմյանց վրա ցեխ շպրտելուն: Գործընթացը փաստացի սկսվել է Փաշինյանի մարզային այցերից, որը նորից քննադատում է «նախկիններին», նրանք հակադարձում են, եւ երկրում ատելության հռետորաբանությունը նոր թափ է հավաքում ու ծավալվում:

Հայաստանում կա մի ընտրազանգված, որն այլընտրանքային քաղաքական ուժի պահանջ եւ հույս ուներ, որը կապված չէր լինի ոչ «ներկաների», ոչ «նախկինների» հետ: Թվում էր՝ այդ ուժը կարող է լինել «Բոլորին դեմ եմ» շարժումը, բայց այս շարժման գործողություններն ու խոսույթը եւս շատերին վանեցին եւ կասկածների տեղիք տվեցին, որ նրանք էլ են Փաշինյանի համար խաղի մեջ մտել, ու նրանցից ոմանք իշխանության հետ ջերմ հարաբերություններ ունեն:

Այնուամենայնիվ, չնայած քաղաքական ուժերը չունեցան բավարար խոհեմություն, որ ավելի կազմակերպված ու միասնական պայքարի դուրս գան՝ գիտակցելով այս ընտրությունների էքզիստենցիալ բնույթը, սակայն հայտ ներկայացրած ուժերի մեջ լայն ընտրության հնարավորություն կա, եւ ընտրողն այլընտրանք ունի, մնում է, որ գիտակցի ընտրություններին մասնակցելու կարեւորությունը եւ պարտադիր գնա քվեարկության՝ գիտակցված ընտրություն կատարելով:

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՆԻԿՈԼԸ 18 ԹՎԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄՆՏՐԵՑ ՈՒ ՉԳՏԱՎ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Փաշինյանը կրկին թույլ չտվեց, որ մենք ձանձրանանք: Կիրակի օրվա նրա ղեկավարած ավտոերթը, ամենահակասական մեկնաբանություններով հանդերձ, ողողեց մեր կիրակին: Ամենամեծ շոկը, իհարկե, Աննա Հակոբյանի հայտնվելն էր ամուսնու կողքին, նոր սարքած շուրթերով ու հանրության հանդեպ իր մշտական արհամարհական կիսաժպիտով: Թեեւ զարմանալու ոչինչ չկար, քանի որ փետրվարի 27-ին, երբ նա հայտարարեց, թե բաժանվել է Նիկոլ Փաշինյանից, հանձնում է շորերն ու նվերները եւ հեռանում կառավարական առանձնատնից, համարյա ոչ ոք չհավատաց նրան: Տեսնես ո՞ւմ շորերն էր երեկ հագել:

«Վարձով տները թանկ են, գնացել ա մի քանի վախտով կառավարական դաչայում ապրի, մինչեւ մի քիչ էժանով համատեղ վարձով տուն կգտնի», «Սեր եմ ասել», «Цирк ушел, клоуны остались». մեկը մյուսից զվարճալի մեկնաբանությունները հեղեղեցին սոցցանցերի հայկական տիրույթը:

Երեւան-Գյումրի ավտոերթը մի այլ կինո էր, որի սկիզբն ու վերջը ռոմանտիկ երաժշտության տակ ավտո վարող Նիկոլն էր: Մարդկանց կյանքերի գնով վերջապես հասկացել էր, որ շարասյունը պետք է նվազագույն թույլատրելի արագությամբ ընթանա, եւ իր համար դանդաղ «ռուլիտ» էր անում նոր կառուցված «Հյուսիս-Հարավով»: Թեեւ ասում են՝ դրա նպատակը նաեւ այն էր, որ խցանում առաջանար, եւ Գյումրի գնացող բոլոր մեքենաների հոսքը մտներ իր ավտոերթի մեջ, որ մեքենաները շատ երեւային: Վերջում մնացել էր ճանապարհը, Նիկոլն էլ չէր երեւում: Հավանաբար, ղեկը տվել էր վարորդին: Օրվա արդյունքն էլ Շիրակի երեխաների հետ նկարվելու կադրերով հավաքած «ռուլիկն» էր, որը ծայրից ծայր «Գովազդի մասին» օրենքի խախտում է՝ անչափահասների իրավունքների ոտնահարում, որոնց միամիտ դեմքերն ու անարատ ժպիտները լայնորեն «օգտագործվել» են ՔՊ-ի գովազդի արտադրության, տեղաբաշխման եւ տարածման ժամանակ: Այդպես էլ չհասկացվեց, թե արդյոք ավտոերթի մասնակիցների ավտոմեքենանե՞րն էին իշխանական ՁԼՄ-ներում երեւացող տրանսպորտային միջոցները, թե՞ խցանման հետեւանքով ճամփեքին «լռվածները»՝ կաթվածահար երթեւեկության արդյունքում կառավարական շարասյան կողմը հիշոցներ ուղարկող: Հազարավոր ավտոմեքենաներ են մասնակցել վարչապետի գլխավորած ավտոերթին՝ գրում էին «Իրական Հայաստանն» ու մյուս նմանատիպ էջերը, իսկ մարդիկ տակը «քոմենթում» էին, թե դա վարչական ռեսուրս էր, ոչ թե «նորմալ» գյումրեցիներ:

Ի դեպ, Շիրակի մարզպետն անգամ դա հաստատել է՝ «Փաստինֆոյին» ասելով. «Պետական համակարգի մասնակիցներին հորդորելու կարիք չկա: Եթե մարզպետը մասնակցում է, ապա մարզպետարանում կլինեն գոնե մի քանի համակիրներ, որոնք կցանկանան ազատ օրը մասնակցել ավտոերթի: Դրանից աղմուկ ստեղծել պետք չէ, եթե մարզպետը մի քանի համակիր էլ չունի մարզպետարանում, էլ ինչի՞ է մարզպետ աշխատում»:

Գյումրու Վարդանանց հրապարակը կիրակի օրը ասես հայտնի բաժակը լիներ՝ կիսով չափ լիքը ու կիսով չափ դատարկ: Լիքն էր Փաշինյանի երկրպագուների համար, «Նիկոլ վարչապետ» գոռացողների: Նրանք քիչ էին, Զամբախովի վարձած՝ մեռելի վրա լացող վճարովի պառավների նման: «Գյումրին «այո» ասեց Փաշինյանին»՝ կոկորդ էին պատռում իշխանական բլոգերները սոցհարթակներում: Դրանց հաջորդում էր կիսադատարկ, տեղ-տեղ քաչալ հրապարակը՝ որպես ապացույց, որ Գյումրին բոյկոտում է Փաշինյանին: Ըստ որոշ գնահատականների, Վարդանանց հրապարակը լիքն էր միայն 50-60 տոկոսով:

Ինչ տեսաք Դուք, կիսադատա՞րկ էր Վարդանանց հրապարակը, թե՞ լիքը: Գյումրեցի քաղաքագետ **Գագիկ Համբարյանը** պատասխանում է, որ, համենայնդեպս, 18 թվականի ժողովուրդ այնտեղ չկար, իսկ Փաշինյանը 18 թվականի իրադարձությունների տակ է մնացել: «Դանիել Իոաննիսյանի կարծիքով, 1230 մեքենա էր այդտեղ, հետաքրքիր է, Դանիել Իոաննիսյանը որ էդպես մանրակրկիտ հաշվել է մեքենաների քանակը, մի հատ դրոն ինչի՞ չհանեց՝ Գյումրիի հրապարակը նկարեին, որ որպես արդարության ջատագով ասեր, թե քանի մարդ է մասնակցել հրապարակի համերգին: Իրենց ՁԼՄ-ները փորձում էին չնկարել Վարդանանց արձանախմբի մասը, Յոթ վերք ու Ամենափրկիչ եկեղեցիների, Ռիժկովի փողոցը հրապարակին միացնող կամ հրապարակից շուկա տանող հատվածների դատարկությունները, «Կինո Հոկտեմբերի», «Պոնչիկ-Մոնչիկի», ռեստորանների շրջակայքի դատարկությունը: «Սիվիկի» նկարած հրապարակը բացահայտ մանիպուլյացիա էր: Իրենք նկարել էին միայն բեմի դիմացի փոքրիկ հատվածը, մինչեւ Վարդանանց արձանախմբից 1-2 մետր դեպի քաղաքապետարան, էդ մասում են մարդիկ եղել»:

Հրապարակի ելքերն ու մուտքերը փակված էին, քաղաքում խցանումներ էին՝ ընդամենը այս փոքր բազմությունը վերահսկելու համար: «Սա ցույց է տալիս, որ իրենք շատ մեծ մասսայի հույս են ունեցել, որ կգա այդտեղ, բայց իրականում մասսան սպասվածից շատ փոքր է եղել»: Ըստ Գագիկ Համբարյանի, ՊՊԾ-ով, ոստիկանությունով, պետական, վարչական ռեսուրս օգտագործելով, կառավարության անդամների ու նրանց շրջապատի ավտոմեքենաները ներգրավելով հանդերձ, Փաշինյանը չստացավ 18 թվականի ժողովուրդը: «Եվ չի էլ ստացվելու նրա մոտ: Ամբողջը վարչական ռեսուրս էր: Գյումրին փոքր քաղաք է, մենք շատ լավ գիտենք, թե ով ով է: Այդ կանայք, որոնք խաղաղությունից էին խոսում, Գյումրիում հայտնի է, գիտեն, թե նախկինում ում համար են աշխատել, ում ղեկավարած դպրոցում են նրանց բարեկամները եւ այլն: Մեկը չկար՝ հարցներ՝ էդ ինչ խաղաղության պայմանագիր եք ստորագրել, երբ Ադրբեջանի նախագահն ասում է՝ սահմանադրությունը կփոխեք, կստորագրենք»:

ՀԱՄԵՐԳ

ԳՅՈՒՄՐԵՑԻՆ ՀԱՍԿԱՑԵԼ Է ՎԱՂՈՒՑ, ԹԵ ՈՎ Է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

«Հրապարակի» զրուցակիցը գյումրեցի ազատամարտիկ, հրապարակախոս **Արա Նախշքարյանն** է:

- Երեկ Նիկոլ Փաշինյանին Գյումրին, ինչպես ասում են, ապտակ հասցրեց: Փաշինյանի «Վարչաբենդի» համերգին սակավաթիվ մարդիկ էին մասնակցում, որոնց մեծ մասն այլ մարզերից ու քաղաքներից էր բերված, իսկ գյումրեցիները գրեթե չէին մասնակցում միջոցառմանը: Ինչո՞ւ Գյումրին նման ընդունելության արժանացրեց Փաշինյանին:

- Գյումրին բոլոր ժամանակներում էլ՝ նախկինում էլ, այսօր էլ ընդդիմադիր է: Գյումրին բոլոր ժամանակներում պահանջատեր է եղել եւ քննադատել է իշխանություններին, անկախ նրանից, թե ով է եղել երկրի ղեկավարը: Այժմ Գյումրին Նիկոլ Փաշինյանին չընդունելու մի շարք պատճառներ ունի, Միքայել սրբազանի կալանավորումից սկսած, վերջացրած Վարդան Ղուկասյանով: Այնպես չէ, որ Գյումրիում այդ ամենը մոռացել են եւ այսօր պետք է գրկաբաց ընդունեին: Նիկոլ Փաշինյանի այցը հերթական շոուն էր, հույսները անձրեւն էր, բայց հակառակի պես անձրեւ էլ չեկավ: 5000-6000 մարդ իրենք էին իրենց հետ բերել, Գյումրիից միայն դպրոցականներն էին մասնակցում, ուսուցիչները, նրանց ստիպել էին մասնակցել, իսկ երեխաները եկել էին ուղղակի համերգ նայելու, չէին եկել Նիկոլին տեսնելու: ՔՊ-ի քաղաքական թեզերի տարածումը Գյումրիում փաստացի ձախողվեց: Ես, որպես քաղաքացի, վստահաբար կարող եմ ասել, որ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ պարտվեց:

- Գյումրիի քաղաքապետի պաշտոնը մի կարճ շրջան զբաղեցրած Սարիկ Մինասյանը կիրակի օրը Փեյսբուքում ամենավերջին խուլիգանի նման հայհոյել էր իրեն քննադատող քաղաքացուն: Սա ինչ վարքագիծ է:

- Որպես գյումրեցի, որպես մարդ, Սարիկ Մինասյանից, եթե անկեղծ, նման բան չէի սպասում, որովհետեւ նա, ամեն դեպքում, անկախ այն բանից, որ ՔՊ-ական է, հավասարակշռված տղա է, նրա մարդ տեսակը հավասարակշռված է: Սա հերթական ապացույցն է, որ իրենց նյարդերը տեղի են տալիս: Անգամ Սարիկի նման հավասարակշռված մարդը էլ չի դիմանում մոտալուտ պարտության մտքին: Նրանք գիտակցում են, որ ինչ-որ մի բան իրենց մոտ չի ստացվում: Նրանք հասկացան, որ Գյումրին այն քաղաքն է, որտեղ չեն կարող մարդկանց վրա ազդել համերգներով, չգիտես ինչերով: Գյումրեցին հասկացել է վաղուց, թե ով է Նիկոլ Փաշինյանը: Սարիկի եւ մյուս ՔՊ-ականների պահվածքը վառ ապացույցն է այն բանի, որ նրանք իսկապես պարտվում են: Ես մի քանի հարյուր ֆեյք էջ եմ բլոկել երեկ, դա էլ այն մասին է փաստում, որ նրանք վիրավոր գազանների պես որոշել են ինչքան կարող են եւ ինչ կարող են անել:

- Իշխանությունները պարբերաբար հայտարարում են, որ «Գյումրի-2» թույլ չեն տալու, որ ամեն գնով այն կանխելու են: Գյումրու ընտրություններում ինչ անօրինական բան է եղել:

- Գյումրի-2՝ նկատի ունեն, որ ընդդիմության համախմբում թույլ չեն տալու: Նրանք ամեն ինչ անելու են, որ ընդդիմությունը չհամախմբվի, գուցե կալանավորումներ լինեն, կամ այլ քայլեր անեն, ամեն դեպքում, Գյումրու ընտրություններում ոչ մի ապօրինի բան չի եղել: Գյումրիում ընդդիմությունը միացավ եւ ջախջախիչ հաղթանակ տարավ նախորդ տարի, եւ իշխանություններն այս մեկ տարում դա չեն կարողացել մարսել:

ՄԵՆՔ ԴԱՇԻՆՔ ԷԻՆՔ ՈՒԶՈՒՄ, ԻՐԵՆՔ՝ ՈՉ



Զգային ինքնորոշում միավորման առաջնորդ **Պարույր Հայրիկյանն** անցած շաբաթ հայտարարել էր, որ պատրաստվում է առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցել ԱՄՆ-ում ազատազրկված Վարդան Ղուկասյանի՝ Դոգի գլխավորած կուսակցության հետ դաշինքով, ինչը շատերի զարմանքն էր հարուցել: Հայրիկյանը հայտարարել էր, թե պատճառն այն է, որ իրենց առաջարկած ծրագրային դրույթներին համաձայնել է միայն այդ քաղաքական ուժը: Նա մեզ հարցազրույց էր տվել այդ ամենի վերաբերյալ եւ անգամ նշել, որ Վարդան Ղուկասյանն իր հայհոյանքներով ավելի բարձր է, քան մյուս քաղաքական ուժերը, սակայն կիրակի օրը նա հանկարծ մի հայտարարությամբ հանդես եկավ, որ հունիսի 7-ի ընտրություններին իր ղեկավարած ուժը չի մասնակցելու. «Որեւէ ուժ պատրաստ չէր հանուն ԲԺ-ի՝ «բացարձակ ժողովրդավարության» առաջնահերթության նախընտրական դաշինք կազմել, եւ ԱԻՄ-ը չի մասնակցի այս «ընտրությանը»: «Հրապարակը» զրուցել է նրա հետ:

- Մեր նախորդ զրույցում գովեստի խոսքեր էիք շռայլել Դոգի հասցեին, ինչ «սեւ կատու» անցավ ձեր միջեւ, որ որոշեցիք ընտրություններին չմասնակցել: Ասում եք, որ ոչ մի ուժ հանուն ԲԺ-ի չպայքարեց:

- ԲԺ-ն՝ բացարձակ ժողովրդավարությունը, որեւէ ուժի համար այդպես էլ չկարեւորվեց: Ինչ վերաբերում է Վարդան Ղուկասյանի հետ համագործակցությանը, ապա նրանք ընդունեցին բացարձակ ժողովրդավարության առաջնահերթությունները, այդ հարցում մենք խնդիր չունեցանք, սակայն մենք ի սկզբանե պայման էինք դրել, որ ընտրություններին դաշինքով ենք մասնակցելու, իրենք համաձայն էին, բայց հետո ինչ-ինչ հանգամանքներից ելնելով որոշեցին, որ պետք է առանց դաշինքի մասնակցեն, սակայն մենք, քանի որ լրիվ այլ բան էինք պայմանավորվել, ասացինք, որ չենք մասնակցի ընտրություններին: Ի դեպ, եթե անգամ ԱԻՄ-ի անունով գնայինք ընտրությունների, միեւնույն է, դա ոչինչ չէր փոխելու, քանի որ այն հակասում էր մեր պայմանավորվածությանը: Չհամաձայնեցին, մենք էլ ասացինք՝ հաջողություն ձեզ:

- Իսկ ինչո՞ւ վերջին պահին հրաժարվեցին:

- Ես չգիտեմ, թե ինչ էին ցանկանում: Մենք ոչինչ չէինք ցանկանում, սակայն իրենք ժողով էին արել՝ ներքին կարգով, եւ որոշել առանց դաշինքի մասնակցել, մենք էլ ասացինք՝ հաջողություն: Իրենք էլի են ասում, որ պատրաստ են համագործակցել, սակայն մենք մեր որոշումներից երբեք հետ չենք կանգնում: Կմասնակցենք հանուն ժողովրդավարության, սակայն՝ միայն դաշինքով: Ուրիշ հավակնություն մենք չունեինք: Թե իրենք ինչու այդպես որոշեցին, դա իրենց գործն է, մեր գործը չէ, իրենք գիտեն: Ես զարմացած էի, որ ինչ-որ մի ուժ վերջապես համաձայնել էր, սակայն եղավ այդպես:

Էթիկայի կանոնագիրքն ու 2021-ի ծրագիրը ճանաչվել են քույր փաստաթղթեր

Դեկտեմբերի սկզբին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջնորդը հայտարարեց, որ Էթիկայի կանոնագիրք են ընդունել, քանի որ, որպես կառավարող ուժ, հատուկ պատասխանատվություն են զգում երկրում քաղաքական միջավայրի, մթնոլորտի, կուլտուրայի զարգացման գործում: «Ստանդարտներ ենք սահմանում ինքներս մեզ համար, դրանով իսկ հայտարարելով ինքներս մեզ հայհոյախոսության, անձնական թիրախավորման, վիրավորանքի դաշտից դուրս դնելու, ինչպես նաեւ՝ բարեվարքության լավագույն ստանդարտներին մեր նվիրվածության մասին: Այնպես որ, երբ հայհոյանքին հայհոյանքով, վիրավորանքին վիրավորանքով չպատասխանենք, խնդրում ենք դա չընկալել որպես թուլություն կամ վախվորածություն, այլ՝ նվիրվածություն մեր իսկ ընդունած Էթիկայի կանոնագրքին»,- գրել էր նա: Սակայն, ինչպես մյուս խոստումները, այս կանոնագիրքն էլ թղթի վրա մնաց: Այն ընդունելուց հետո անցած 5 ամիսներին իշխող ուժի ներկայացուցիչները բազմիցս հայհոյանքներ են հնչեցրել, թիրախավորել, վիրավորել մարդկանց:

ՔՊ-ականների թիրախում են եղել հատկապես Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, բարձրաստիճան հոգեւորականներ, վերջին շրջանում՝ տարբեր քաղաքական ուժեր եւ գործիչներ: ՔՊ էթիկայի կանոնագիրքն ամենաակտիվ ոտնահարողներն են Նիկոլ Փաշինանը, Վահագն Ալեքսանյանը, Ռուբեն Ռուբինյանը, Ալեն Սիմոնյանը, Անդրանիկ Քոչարյանը եւ այլք, իսկ երեկ փայլեց գյումրեցի Սարիկ Մինասյանը՝ համացանցում սեռական հայհոյանք գրելով:

Փաշինյանի մասնակցությամբ ամենաաղմկահարույց միջադեպը տեղի ունեցավ Երեւանի մետրոպոլիտենում: Նա մատ էր թափ տալիս եւ բղավում 1993-ին Արցախյան ազատամարտում զոհված հերոսի՝ դաշտային հրամանատար Մերուժան Մոսիյանի դստեր՝ Արմինե Մոսիյանի վրա, որն անչափահաս որդու հետ էր: Փաշինյանն արցախցիներին «փախածներ» անվանեց, գոռում էր՝ մատ թափ կտամ, կասեմ... Օրերս էլ նա ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ ընդդիմադիրներին «շուն ու շանգյալն է» ընտրելու. «Եթե ես իմ մտքով անցկացնեմ, որ կարող է ԲՀԿ-ն, «Ուժեղ Հայաստանը», «Հայաստան» դաշինքն անցնեն խորհրդարան, նշանակում է Հայաստանում էդքան շուն ու շանգյալ կա, որ կարող է իրենց օգտին քվեարկել»: Նիկոլ Փաշինյանը նաեւ առաջարկել էր, որ «Քոչարյանն էշի պես զռռա, բայց՝ հավեսով», քանի որ վերջինս փողքաստում հայտարարել էր, որ շատ դիտումներ ունենալը մեծ բան չէ՝ «եթե որեւէ քաղաքական գործիչ էշի պես զռռա, կարծում եմ՝ դիտումները միլիոնները կխփեն»:

Փաշինյանից հետ չի մնում նաեւ ԱԺ նախագահը. Բաղրամյան փողոցում իրեն մոտեցած քաղաքացուն Ալեն Սիմոնյանը հայհոյել էր եւ կարգադրել, որ 2 քաղաքացու բերման ենթարկեն ոստիկանություն, ապա քրեական վարույթ հարուցվեց: Օրերս էլ ԱԺ ճեպազրույցի ժամանակ նա լրագրողներին օտարերկրյա գործակալ էր անվանել. «Եթե Նիկոլ Փաշինյանը չլիներ, դուք ինոագենտ կլինեիք»: ԱԺ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանն էլ թիրախավորել էր կերակրող մորը՝ ասելով. «Անկախ մարդու կրծքերի զբաղվածությունից՝ չեն կարող անել քրեական օրենսգրքով արգելված արարք եւ ասեն՝ ինձ չպետք է ձերբակալեն»: Վիրավորելու գծով ռեկորդակիրների մեջ է ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը: Նա հատկապես թիրախավորում է հոգեւորականներին, վիրավորական պիտակներ է կպցնում իրենց քննադատողներին, հատկապես հաճախ է անդրադառնում Լեւոն Տեր-Պետրոսյանին, լրագրողներին:

Բայց ՔՊ-ական հայհոյող ծանր հրետանին Վահագն Ալեքսանյանն է: Նա ՔՊ-ի քաղաքական մրցակիցներին է թիրախավորում, օրինակ Ռոբերտ Քոչարյանին, Սամվել Կարապետյանին, որին Կալուգացի Սամո է կոչում, նաեւ՝ լրագրողներին: Իսկ երեկ՝ Գյումրիի համերգից հետո «փայլեց» Սարիկ Մինասյանը՝ իրեն ուղղված քննադատական կոռեկտ մեկնաբանությունների հեղինակներին սեռական բնույթի հայհոյանքներ գրելով եւ «ռազբորկաների» կանչելով:

Նշված դրվագները չնչին մասն են այն միջադեպերի, որոնք տեղի են ունեցել կուսակցության Էթիկայի կանոնագիրք ընդունելուց հետո: Պարզ է, որ հերթական սուտն է ասվել իշխող կուսակցության կողմից, ու հերթական անգամ իրենց խոստումները եւ ընդունած փաստաթղթերը մնացել են թղթի վրա՝ անկատար, իսկ իրենք շարունակել են կիրառել հանրային խոսույթն աղտոտելու, ոչ կոռեկտ բառապաշարով հաղորդակցվելու, հանրությանը պառակտելու եւ թշնամացնելու ավանդույթները:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱՆՀԱՏԱԳՈՒՅՑ

ԹՈՒՅԼ ՏԱՆ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ ԹՈՂՆԵՆ. ՔՊ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՍԵԼԻՔԸ

Երբ պետության ղեկավար է դառնում որեւէ անգրագետ եւ պրիմիտիվ մեկը, այդ պետությունը չի կարող ոչ անվտանգություն ունենալ, ոչ էլ զարգացում: Փաշինյանն ուղիղ եթերում ներկայացնում է ՔՊ նախընտրական ծրագիրը, եւ լսելով նրան՝ համոզվում ես, որ նա ոչ պատմություն գիտի, ոչ էլ գիտելիքներ ունի պետության նպատակի, զարգացման եւ գործունեության մասին: Նրան թվում է, որ եթե ինքը հայտարարի, որ որեւէ պահանջ չունի Ադրբեջանից եւ Թուրքիայից, իրեն հանգիստ կթողնեն, ինքն էլ առանց ավելորդ լարումների ցմահ կմնա վարչապետի պաշտոնին: Նրա նախընտրական ծրագիրը Հայաստանին հանգիստ թողնելու իր պատկերացումների մասին է:

Փաշինյանը փորձում է ձեւակերպել, թե ինչպես է պատկերացնում Հայաստանի արտաքին անվտանգության ապահովումը, ինչ մեխանիզմներով է դա հնարավոր իրականացնել: Ըստ նրա՝ երկրի արտաքին անվտանգությունն ապահովվում է 4 սկզբունքի համադրման միջոցով, որոնցից ուժեղ եւ մարտունակ բանակը վերջինն է՝ ինչ-որ իմաստով մնացորդային:

Առաջինը նա համարում է միջազգային լեգիտիմությունը, որի տակ նա հասկանում է, որ Հայաստանին: Փաշինյանը եթե մի քիչ գիտելիք ունենար, մի քիչ պատմություն ու մի քիչ էլ աշխարհագրություն իմանար, կիմանար, որ աշխարհի քարտեզը, պետությունների սահմանները, այդ թվում՝ եւ միջազգայնորեն ճանաչված, անընդհատ փոխվել են, որ պետություններն անընդհատ պայքարում են իրենց հսկողության տակ գտնվող տարածքներն ընդլայնելու համար, եւ որեւէ մեկին չի հետաքրքրում՝ դա միջազգայնորեն ճանաչված սահմա՞ն է, թե՞ ոչ: Եթե դու հրաժարվում ես այլ երկրի տարածքի նկատմամբ ունեցած հավակնություններից, չի նշանակում, թե ուրիշները հրաժարվելու են քո նկատմամբ ունեցած հավակնություններից: Ընդհակառակը՝ եթե հայտարարում ես, որ դու գառ ես, դրանից գայլերի քանակը ոչ թե փոքրանում է, այլ՝ կտրուկ ավելանում:

Միացյալ Նահանգները ճանաչում է Իրանի միջազգայնորեն ճանաչված սահմանները, բայց դա խոչընդոտ չէր Իրանի դեմ պատերազմ սկսելու համար: Թուրքիան ճանաչում է Սիրիայի միջազգայնորեն ճանաչված սահմանները, բայց Սիրիա զորք է մտցրել եւ օկուպացրել այդ երկրի տարածքի մի մասը: Հիմա նույնն անում է Իսրայելը՝ օկուպացնելով Սիրիայի եւ Լիբանանի տարածքները, որովհետեւ ուզում է ընդլայնել իր տարածքը: Ռուսաստանն ու Ուկրաինան էլ են ստորագրել Ալմա Աթայի հռչակագիրը, բայց հիմա բանակցությունների հիմնական թեման Ուկրաինայի կողմից Ռուսաստանի տարածքային հավակնությունների բավարարումն է, ոչ մի ուկրաինացի պաշտոնյայի մտքով չի անցնում, որ ասի՝ բա ո՞ւր մնաց Ալմա Աթայի հռչակագիրը, չէ՞ որ դուք 1991 թվականին ճանաչել եք մեր տարածքային ամբողջականությունը, միջազգայնորեն ճանաչված մեր սահմանները: Փաշինյանի չափ խելք ու գիտելիք ուրիշ ո՞վ ունի:

Նա ասում է, թե մենք՝ նկատի ունենալով իր իշխանությունը, ոչ մի բան չենք զիջել, իսկ այն, որ Ադրբեջանն օկուպացրել է Հայաստանի տարածքի մի մասը, իր ասելով՝ 200 քառակուսի կիլոմետրը, նա հույս ունի վերադարձնել սահմանազատման ճանապարհով: Եթե Ադրբեջանը նպատակ կամ ցանկություն ունենար ինչ-որ բան վերադարձնելու, հաստատ, ամեն տարի սահմանին դիրքային առաջխաղացում չէր իրականացնի: Փաշինյանը ոչ մի քառակուսի սանտիմետր տարածք սահմանազատումով չի վերադարձրել, հակառակը՝ սահմանազատման անվան տակ հազարավոր հեկտարներով տարածք է հանձնել, բայց խոսում է տարածք վերադարձնելու մասին:

Արտաքին անվտանգության մյուս գործոնը նա համարում է աշխարհի հետ փոխկապվածությունը, որ երկիրը դառնա գլոբալ մատակարարումների շղթայի մաս: Պատմում է, որ ինքն աշխարհի այլ երկրների սուպերմարկետներում հարցնում է, թե վաճառվող ապրանքներից որոնք են հասել այդ խանութ Հայաստանի տարածքով, ու չի գտնում այդպիսի ապրանքներ: Մտածում է, որ եթե Հայաստանը դառնա գլոբալ մատակարարումների շղթայի մաս, ապա Հայաստանի դեմ պատերազմը կդառնա միջազգային խնդիր, քանի որ, երբ մատակարարումները դադարեն, եւ այդ երկրներում սկսվեն ներքաղաքական պրոցեսներ, հասարակությունը կասի՝ ինչո՞ւ Հայաստանի անվտանգությունն ապահովված չէ, ինչո՞ւ են մատակարարումները դադարեցվել:

Թե որքան խորն է նա պատկերացնում միջազգային հարաբերությունները եւ ինչ հայտնագործություն է արել այդ ոլորտում, արտահայտում է նրա հետեւյալ ձեւակերպումը. «Սա ֆունդամենտալ խնդիր է, որը մենք հաշվի չենք առել՝ որպես անվտանգության ապահովման գործոն, որ ազդեցիկ կենտրոնները դողան Հայաստանի վրա, որ թույլ չտան, որ գլոբալ մատակարարումները չվտանգվեն»: Չի հասկանում անգամ, որ շատ դեպքերում պատերազմները սկսվում են հենց այդ ենթակառուցվածքների նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար, եւ դրանք ոչ միայն պատերազմ զսպող, այլ նաեւ հրահրող գործոն են: Ուկրաինայի տարածքով էին անցնում Եվրոպան սնուցող գազամուղներն ու նավթամուղները, բայց դա չօգնեց Ուկրաինային՝ խուսափել պատերազմից:

Երրորդ գործոնը Փաշինյանը ձեւակերպում է այսպես. «Երկարաժամկետ առումով պետք է կանխատեսելի լինենք աշխարհի համար: Մեր ամբիցիան մեր միջազգային ճանաչված տարածքներից դուրս չպետք է լինի, մենք չպետք է նպատակ դնենք ուժեղանանք, գնանք նվաճենք, Տիգրան Մեծի կայսրությունը վերականգնենք, ոչ մեկ չի թողնի՝ ոչ թե որ Հայաստանը զարգանա, այլ՝ գոյատեւի»: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ խելքի տեր մարդ է Փաշինյանը, մտածում է, որ եթե մենք հայտարարենք, որ զարգանում ենք միայն հանուն զարգացման, այլ ոչ թե հետագա ընդլայնման նպատակով, բոլորը սկսեն մեզ օգնել, բայց հենց ասենք, որ այդ զարգացումն օգտագործելու ենք ընդլայնման համար, դա արդեն ընկալվելու է որպես սպառնալիք, եւ սկսելու են մեզ ոչնչացնել: Երբ որեւէ երկիր այնքան ուժեղ է լինում, որ կարողանում է հարձակվել եւ ոչնչացնել իր թույլ հարեւանին կամ մրցակցին, նա չի նայում, թե այդ հարեւանն ինչ ամբիցիաներ ունի, ունի՞, թե՞ չունի:

Փաշինյանը բանակը համարում է արտաքին անվտանգության ապահովման պահեստային գործոն, երբ վերը նշված գործոնները չեն աշխատում, նոր բանակը պաշտպանում է երկրի միջազգային ճանաչված սահմանները: Իսկ բանակը հնարավոր է կամ թույլ կտան զարգացնել միայն մի դեպքում. «Եթե դու ասում ես, որ քո կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ, դարավոր նպատակը միջազգային ճանաչված սահմանների պաշտպանությունն է, ոչ մեկ չի կարող քեզ ասել, թե ինչու ես հզորացնում քո բանակը»:

Փաշինյանի համար ամեն ինչ կառուցված է թույլ տալու, թույլտվություն ստանալու գաղափարի վրա. ինչ անել, որ թույլ տան տնտեսությունը զարգացնել, ինչ անել, որ թույլ տան, որ ընդհանրապես զարգանաս, կամ թույլ տան բանակն ուժեղացնել: Եթե թույլտվություն չկա, ուրեմն հնարավոր չէ ինչ-որ բան անել: Նա չի հասկանում, որ պետություններն անընդհատ մրցակցության մեջ են, եւ այդ մրցակցությունը միմյանց հաղթելու, ուրիշների ռեսուրսներին տիրանալու, ուրիշներին հպատակեցնելու եւ ոչնչացնելու համար է, եւ այդ մրցակցության մեջ թույլ տալ կամ թույլ չտալ չկա:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԹԵ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՆՉՈՒ ՍԻՐԵՑ «ԿՈՒԿՈՒՌՈՒԶԸ»

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ վերջին շրջանում ցուցադրաբար կուկուռուզ, կարտոֆիլ կամ սուջուխ ուտելը, ինչպես նաեւ՝ շարքային քաղաքացիների հետ գրկախառնվելը, պարզվում է, թանկարժեք ներկայացում է, որը բեմադրվում է նրան տրամադրված մեթոդական ցուցումների հիման վրա:

ԱՄՆ-ում բնակվող մանկության ընկերս՝ Արսենը, որը PR ոլորտի մասնագետ է, վերջերս մեր ունեցած զրույցի ընթացքում շատ հետաքրքիր մանրամասներ պատմեց՝ նշելով, որ դա կոչվում է «սեփական տղա» խաղալու նախագիծ: Արսենի խոսքով՝ կան հավաստի տեղեկություններ, որ Փաշինյանի իմիջի «վերագործարկման» հետեւում կանգնած է ամերիկյան Edelman PR գործակալությունը, որը մասնագիտացած է «թունավոր» քաղաքական գործիչներին «մարդկայնացնելու» գործընթացում: Ըստ այդ մոտեցման՝ սննդի հետ կապված դրվագները պատահական չեն ընտրվում, քանի որ սնունդը դիտարկվում է որպես մարդկանց միավորող գործոն: Ուղերձը պարզ է՝ «նա ձերն է, ապրում է ձեր միջավայրում եւ օգտագործում է նույն առօրյա սնունդը»:

Ի դեպ, Edelman ամերիկյան PR գործակալության ծառայություններից օգտվելն աշխարհում համարվում է ամենաթանկարժեքներից, եւ այն կարող է արժենալ ամսական մինչեւ 200-500 հազար ԱՄՆ դոլար:

Սակայն ակնհայտ է, որ այս ամենն իրականում կեղծ բեմադրություն է, ինչպես, օրինակ, շաբաթներ առաջ ամուսնալուծության մասին Աննա Հակոբյանի հայտարարությունը եւ ապա կրկին միասին հանրային միջոցառումներին հայտնվելը: Փաստորեն, անգամ արեւմտյան տեխնոլոգիաները չեն օգնում, եւ դա է պատճառը, որ Փաշինյանն այդպես էլ «յուրային» չդարձավ ու այդ իմաստով թերեւս որեւէ շանս չունի: Դա են վկայում նաեւ սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները, ըստ որոնց՝ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ հանրային վստահության մակարդակը ՀՀ բոլոր ղեկավարների՝ վերջիններիս կառավարման ընթացքում ունեցած վարկանիշի համեմատության համատեքստում ամենացածրն է:

Կարճ ասած՝ մենք վաղուց դարձել ենք «Փաշինյանի կրկես»-ի հանդիսատեսը: Պարզապես ցավալին այն է, որ այդ կրկեսային զվարճանքը՝ «ուրախ ավտոբուսով» հանդերձ, դարձել է պետության կառավարման անբաժանելի մասը...

Գրիգոր ԼԱԼԱՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՔԱՆԴԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԽԱՐԽԵԼ ՀԻՄՔԵՐԸ, ՀԵՏՈ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԿԴԱՌՆԱ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Համ զրուցակիցն է «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» (ՀՍԻԿ) ՀԿ-ի նախագահ, իրավունքի փորձագետ **Գեւորգ Մանուկյանը**:

- Վարչապետ Փաշինյանը բազմիցս նշել է, որ Սահմանադրության փոփոխությունը ներքին անհրաժեշտությամբ է պայմանավորված, ոչ թե արտաքին ճնշմամբ, բայց Անկախության հռչակագիրն անվանել է «կոնֆլիկտի հռչակագիր»: Որքանո՞վ է արդարացված փոփոխությունների անհրաժեշտությունը:

- Ամեն նոր իշխանություն Սահմանադրությունն օգտագործում է միմիայն իր շահերին համապատասխան՝ այնպես, ինչպես իրեն է ձեռնտու: Մեր Սահմանադրությունն ունի հիմնասյունային արատներ՝ իրավունքի տիրապետության ապահովման, իշխանությունների տարանջատման համակարգի ներդաշնակ կառուցման, դատարանների իրական անկախության, մարդու իրավունքների պաշտպանության համակարգի գիտական հիմնավորվածության եւ միջազգային չափանիշներին համապատասխանության առումով: ...Մեր Սահմանադրությունը պարունակում է «փառաց որոգայթներ». այն ցանկացած իշխանության դնում է «փառքի եւ վայելքների» գայթակղության առաջ: Այս իշխանությունը նույնպես այդ գայթակղությունից չխուսափեց: Ժողովրդին ծառայելու հայտով եկած ուժը հայտնվեց նույն արատավոր համակարգի մեջ: Ահա՝ այստեղ պետք է փնտրել «ամենակարողության» միֆի արմատները, երբ ցանկացած որոշում հնարավոր է առաջ տանել ամեն կերպ՝ անօրինական ճանապարհներով: Ո՞ւմ համար է գաղտնիք, որ Ադրբեջանը պահանջում է Սահմանադրությունից հանել Անկախության հռչակագրին հղումը՝ այնտեղ Լեռնային Ղարաբաղի հիշատակումների պատճառով: Միաժամանակ ընդգծեմ, որ այս պահին չկա որոշում՝ Անկախության հռչակագիրը Սահմանադրությունից հանելու մասին, քննարկվում է միայն՝ նախաբանում հղումը պահպանե՞լ, թե՞ հանել:

- Իրավական առումով ի՞նչ է նշանակում «հղումը հանել»-ը:

- ՀՀ Սահմանադրության նախաբանում ամրագրված է, որ այն հիմնված է Անկախության հռչակագրի վրա: Սա նշանակում է, որ հռչակագիրը հանդես է գալիս որպես մեկնաբանող աղբյուր: Եթե հղումը հանվում է, ապա Անկախության հռչակագիրն այլեւս չի դիտարկվում որպես սահմանադրական մեկնաբանության հիմք, Սահմանադրությունը դառնում է ինքնաբավ փաստաթուղթ՝ առանց այդ պատմաքաղաքական հղման, դատարանները, այդ թվում՝ Սահմանադրական դատարանը, չեն կարող հղվել հռչակագրին՝ սահմանադրական նորմերի իմաստը բացատրելու համար: Սա ունի կոնկրետ, բայց սահմանափակ իրավական ազդեցություն. այլեւս հնարավոր չի լինի հիմնավորել, որ Սահմանադրության իմաստը պետք է հասկանալ՝ հաշվի առնելով հռչակագիրը: Օրինակ՝ տարածքային, ինքնորոշման կամ պետական նպատակների վերաբերյալ հռչակագրի ձեւակերպումները չեն կարող ծառայել որպես իրավական փաստարկ: Քաղաքական ազդեցությունը եւ հետեւանքները շատ ավելի խորն են: Նման փոփոխությունը նշանակում է պետության ինքնության վերաձեւակերպում, հեռացում «հռչակագրային գաղափարախոսությունից», արտաքին աշխարհին ուղարկվող ազդակ, որ Հայաստանը հրաժարվում է որոշ պատմական եւ քաղաքական հիմքերից: Հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հարցի համատեքստում սա ունի զգայուն նշանակություն: Ամենակարճ ձեւակերպմամբ՝ «հղումը հանել»-ը նշանակում է, որ Անկախության հռչակագիրը դադարում է լինել Սահմանադրության իմաստը բացատրող աղբյուր: Ես արդեն նշել եմ վտանգները, բայց կրկնեմ առավել հստակ. թույլ տալ դա անել՝ նշանակում է քանդել պետությունը, խարխլել հիմքերը, ինչից հետո փլուզումը դառնում է անխուսափելի: Պտուղները դառն են լինելու:

- Երբեւէ իրավապաշտպան կառույցները, դուք բարձրաձայնե՞լ եք այս խնդիրների մասին:

- Այո: Ժամանակին ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության ծրագրի շրջանակում, ԵՄ աջակցությամբ, մեր կազմակերպությունը մշակել է համապատասխան հայեցակարգ եւ ներկայացրել կառավարությանը: Թե ինչու այն անտեսվեց, կարծում եմ՝ արդեն պարզ է. նույն «փառքի գայթակղությունների» տրամաբանության մեջ:

- ՔՊ-ի նախընտրական ծրագրում նշվում է կաթողիկոսին հեռացնելու հանձնառության մասին:

- Թղթի վրա ամեն ինչ կարելի է գրել: Ես առաջարկում եմ այլ մոտեցում. Սահմանադրության 18.1 հոդվածը պետք է վերաձեւակերպել այնպես, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանաչվի որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ պահպանելով նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային եւ ինքնության պահպանման գործում: Պետք է սահմանադրորեն արգելել կաթողիկոսական ընտրություններին պետական մարմինների որեւէ միջամտություն կամ ներգործություն՝ այդպիսի արարքը ճանաչելով որպես հայ ժողովրդի եւ նրա ազգային ու հոգեւոր անվտանգության դեմ ուղղված ծանր հանցագործություն:

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՐ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Է ԿՅԱՆՔԻ ԿՈՉՈՒՄ

Հայկա ԱԼՈՅԱՆ



«Դրապարակի» զրուցակիցն է դիվանագետ, ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան **Վարդան Հակոբյանը**:

- Պուտինը Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ ակնարկեց Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ունեցող անձանց քաղաքական գործունեությունը չխոչընդոտելու մասին՝ հույս հայտնելով, որ նրանք անարգել կմասնակցեն ընտրական գործընթացներին: Սակայն Փաշինյանը Մոսկվայից վերադառնալուց հետո իր հռետորաբանության եւ գործողությունների մեջ ոչ միայն որեւէ բան չփոխեց, այլեւ հակառակը՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունից 15 մարդ է բերման ենթարկվել, ընդդիմադիր բլոկների նկատմամբ սեւ փիառ են անում: Գուցե Փաշինյանն ինչ-որ ակնարկ է ուղղում Պուտինին:

- Պուտինը հասկացրեց, որ դուք սա, սա եք անում, առանձնազրույցի ժամանակ ավելի հստակ է ասել: Հիմա սա ոչ թե այդ խնդիրն է՝ Պուտինին մեսիջ ուղարկելու, որովհետեւ ինքը դա անելու համար այդ կշիռը չունի: Սա պարզապես այն հանձնարարականների, այն պայմանավորվածությունների կատարումն է, որը նա ստացել է Եվրամիության գլոբալ-լիբերալիստների կողմից, այսինքն՝ Կայա Կալլասի հետ հանդիպումը, եվրոպացիների այցը, նրանք այդ ծրագիրը մշակած ունեին եւ պայմանավորվել են, որ ցանկացած գնով ընտրություններին իրենք պետք է հաղթեն, ինչը նշանակում է, որ պետք է հաղթեն հակառուսական ուժերը: Ամբողջ այդ տարածքում մենք տեսանք, թե ինչ եղավ Մոլդովայում, հետո՝ Ռումինիայում, հիմա էլ՝ Հունգարիայում: Տեսաք, թե Հունգարիայում ինչ արեցին, ինչ ռեսուրսներ օգտագործեցին, որպեսզի Օրբանի հարցերը լուծեն, եւ լուծեցին: Հիմա նույն բանն անելու են նաեւ այստեղ: Այսինքն, այդ պարտավորությունները, որ նա վերցրել է իր վրա, դա է կատարում: Ինչպես միշտ, ինչ արել է, դա եղել է պարտավորություն: Իր վրա է վերցրել այս-այս քայլը եւ անում է: Շատերին թվում է, թե ինքն անփորձ է կամ լավ քաղաքական գործիչ չէ, սա ուղղակի հստակ ծրագիր է կատարում, պարտավորություն է կատարում: Մայիսի սկզբին Եվրոպայի բոլոր դեմոկրատները հավաքվում են, սա նախընտրական ցուցադրում է, այսպես ասած, ուժի, դիրքորոշումների եւ այլն: Իսկ այն, որ Պուտինին մեսիջ է հղում, դա արդեն ինքնըստինքյան ստացվող բան է, հակառուսական դիրքորոշումը դրսեւորվում է այս քայլերով, պատկերացնում եք, չէ՞, այդ եվրոպացի լիդերները խոսելու են, նրանց բոլոր հայտարարությունները լինելու են հակառուսականության եւ պրոուկրաինական ծիրի մեջ:

- Ընտրություններին ընդառաջ ի՞նչ զարգացումներ կարող են լինել, ասենք՝ հնարավո՞ր է որեւէ պատճառով ընտրությունները հետաձգեն:

- Իրենք ընտրությունների կգնան, վստահ են, որ այդ ամեն ինչն օգտագործելով հաղթելու են: Իսկ եթե հանկարծ զգան, զարգացումները ցույց տան, որ հաղթանակը կասկածի տակ է, այն ժամանակ արդեն այլ քայլերի կդիմեն, ընդհուպ մինչեւ ընտրությունները հետաձգելը, չեղարկելը եւ այլն: Բայց հիմա իրենք մեծ օգնություն են ստացել Արեւմուտքից եւ որոշ հարեւան երկրներից էլ եւ այդ բոլոր լծակները՝ պետական, ադմինիստրատիվ, արտաքին օգնության, եւ այդ ամեն ինչը քողարկում են հակառուսականությամբ՝ պնդելով, որ ռուսներն են հիբրիդային ազդեցություն գործում ընտրությունների վրա:

- Ենթադրենք, ՔՊ-ն վերընտրվում է. ԱՄՆ-ն ստիպված է լինում Իրանի առաջադրած պայմաններն ընդունել, փաստացի Իրանը հաղթողի կարգավիճակ է ստանում, ինչի հետեւանքով էլ տարածաշրջանում Իրանի դերակատարումը կտրուկ աճում է: Եթե Իրանը եւ Ռուսաստանը Փաշինյանին ՀՀ ղեկավար չդիտարկեն, դա կարո՞ղ է ՀՀ-ում իշխանափոխության պատճառ դառնալ:

- Կարող է, իհարկե, եթե Ձեր ասած սցենարը գնա: Այդ պարագայում Հայաստանը հայտնվում է որոշակիորեն նոր իրավիճակի մեջ, դա նախեւառաջ տնտեսականն է: Պուտինն ասաց, չէ՞, որ ԵԱՏՄ-ից դուրս գալն ինչ խնդիրներ կառաջացնի, հիմա նույնը կարող է անել Իրանը: Այսինքն, իրավիճակը շատ ավելի բարդանում է տարածաշրջանում, որովհետեւ դա կնշանակի վերաբերմունքի, հարաբերությունների փոփոխություն Հայաստանի հետ եւ ինքնըստինքյան Հայաստանի հարեւանների, օրինակ, Ադրբեջանի եւ Թուրքիայի: Մանավանդ, եթե Իրանը վերաբերմունքը փոխի Ձեր ասած սցենարով, այդ դեպքում անմիջականորեն իր հարաբերությունները կբարդանան Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների հետ, որովհետեւ նրանց ծրագիրը՝ Թուրքիա-Ադրբեջան միանալու եւ Միջին Ասիա դուրս գալու, դիմադրության է արժանանալու: Դժվար է ասել, թե ինչ կլինի, բայց սրանք պարտավորված են ամեն ինչ անել, որպեսզի վերարտադրեն իրենց իշխանությունը, իսկ եթե տեսնեն, որ չեն կարողանում, այլ քայլերի կդիմեն:

- Ճի՞շտ եմ հասկանում, որ անգամ ընտրվելու դեպքում Փաշինյանի գլխացավանքները դրանով չեն ավարտվելու:

- Ավելի խորանալու են՝ ի՞նչ ավարտվել, որովհետեւ ընտրվելուց հետո գալիս է սահմանադրության փոփոխություն, նոր հարաբերություններ թե՞ Թուրքիայի, թե՞ Ադրբեջանի հետ, խորացում Արեւմուտքի հետ եւ նոր պարտավորություններ Ռուսաստանի եւ Իրանի դեմ եւ այլն: Այսինքն, եթե հանձն ես առել, մինչեւ վերջ պիտի գնաս, հիմա ՔՊ-ականներն այդ վիճակում են:

ՍԱ ԱՅՆ ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻՑ Է, ՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ Է ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն **Հայկ Դեմոյանը**:*

- ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյան ապրիլին մի քանի անգամ այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր, վերջին անգամ՝ Նիկոլ Փաշինյանի հետ: Ճարտարապետների եւ կապալառու շինարարական կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությամբ ուսումնասիրել են հուշահամալիրի երեք մույթերի վրա իրականացված աշխատանքները եւ նշել, որ կատարված աշխատանքների արդյունքները բավարար են: Դուք ինչ գնահատական կտաք այդ ամենին:

- Ես խիստ կզարմանայի, որ ոչ բավարար գնահատեին աշխատանքները, որովհետեւ ոչ բավարարի դեպքում շատ ծանր քրեական գործ է նախատեսվում՝ հանրապետական նշանակության հուշարձանը ձեւախեղելու, հուշարձանի նախնական տեսքը խեղելու համար: Դա քրեորեն պատժելի գործողության նկարագրություն է: Հայկական օրենքներով, որոնք չեն գործում ընդհանրապես ոչ քաղաքացիների եւ ոչ էլ հաստատությունների դեպքում, միջազգային օրենքներով տեղի է ունեցել հանցագործություն՝ շատ բարձր կարգավիճակ ունեցող հուշարձանի տեսքը չի վերականգնվել իր նախնական տեսքով, չնայած որ նախագծի մեջ արձանագրված է եղել հենց այդպես: Շինարարները, այդ թվում՝ ԿԳՄՍ նախարարը, թաքցնում են, թե ինչ է գրված եղել վերականգնման նախագծի մեջ: Այնտեղ սեւով սպիտակի վրա գրված էր, որ պետք էր ապամոնտաժել բնօրինակ քարերը, ապա ուսումնասիրել, մաքրել, եթե բուսածածկ է կամ հող է, ամրացման աշխատանք են անում, հետո պահպանված քարը, եթե դա պահպանվել է 2 հազար տարի կամ 70, տեղադրում են նույն տեղում: Դրա համար նախագծի մեջ գրված էր՝ ապամոնտաժել եւ վերատեղադրել պահպանված բնօրինակ քարը: Քանի որ հիմա բնօրինակ քարերը չկան, կարող է Ժաննա Անդրեասյանն այդ քարերը գտնի եւ բերի տեղադրի: Չի կարող: Այստեղ սկսում է Քրեական օրենսգիրքն աշխատել, եթե կան Հայաստանում դատավորներ, իրավաբանությունից հասկացողներ, բարոյականություն ունեցողներ: Գիտենք, թե դատահիրավական համակարգն ում գրպանում է ամբողջովին: Բայց պարզ երեւում է, թե քանի հոգի պետք է պատասխանատվության ենթարկվի Քրեական օրենսգրքի հիման վրա: Ես չեմ խոսում յուրացումների, ֆինանսական չարաշահումների մասին: Կարող եմ ենթադրել, որ այդ 2 մլն ուռճացված բյուջեն փող ուտելու համար է, դա ենթադրություն կլինի իմ կողմից: Ցանկացած քաղաքացի կարող է գնալ եւ տեսնել, որ այդ քարերը չկան, որ այդտեղ բերել են ուրիշ քարեր: Դա Քրեական օրենսգրքով նշանակում է աղճատում՝ հուշարձանի նախնական դետալների, նախնական կերպարի, որը դատապարտելի է նաեւ միջազգային օրենքներով: Սա լինելու է այն ծանրագույն մեղադրանքների մեջ, որը պետք է ներկայացվի իշխանության բոլոր ներկայացուցիչներին, ընդհուպ մինչեւ էն խոսացող գլուխները, որ ամեն օր կոճակը սեղմում են եւ սկսում են օրը բացել նրանով, թե այսօր ինչ աղտոտություն եւ կեղտոտություն պետք է պաշտպանել:

- Իշխանությունը կասկածի տակ է դրել Հայոց ցեղասպանության փաստը: Արդյոք ժամանակը չէ, որ ՀՀ-ում եւս սահմանվի քրեորեն դատապարտելի հանցակազմ եւ պատիժ՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար:

- Սա աբսուրդի ժանրից է, որովհետեւ մեր «պանծալի» դատավորներն իրենք հանգիստ կարող էին Քրեական օրենսգրքով գտնել համապատասխան հոդված եւ պատասխանատվություն պետք է պաշտպանել:

- Ռուբեն Ռուբինյանի այն պնդումը, թե մինչեւ 1998 թվականը ցեղասպանության ճանաչումը Հայաստանի համար արտաքին քաղաքականության առաջնահերթություն չի եղել, ճիշտ է, թե մոլորեցնող:

- Ռուբինյանը մի քիչ ցածրակարգ է, ինչպես նաեւ՝ Փաշինյանը, որ ես իրենց մեկնաբանեմ, առավել եւս՝ ցեղասպանության հարցում: Ռուբինյանն այդպիսի միտք արտահայտելուց առաջ կարող է ինձ ասել, թե ցեղասպանության զոհերի ինչ հուշագրություններ է կարդացել կամ նատվության կանչել Փաշինյանին ու նրա բոլոր ուսապարկերին, բայց քանի որ դատավորները եւս ուսապարկ են, ակնկալել, որ Հայոց ցեղասպանությունը վերին գաղափարներ, բարոյականություն, արժանապատվություն, ազգային հիշողություն եւ այլն... դա անիմաստ բան է: Պետք է սպասել իքս պատմական փուլի եւ բոլորին պատասխանատվության ենթարկել:

- Օրեր առաջ ՌԴ-ում ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք ընդունվեց: Սա ինչ կտա Հայաստանին:

- Ես, որպես հայ մարդ, որպես գիտնական եւ ցեղասպանությամբ զբաղվող, կուզենայի տեսնել այն առաջին դատական գործը, որ կհարուցվեր Նիկոլ Փաշինյանի կամ նրա կառավարության որեւէ անդամի դեմ, որը կհայտնվի Ռուսաստանի տարածքում: Հաշվի առնելով, որ Պետդուման 1995 թվականին պաշտոնապես ընդունել է ցեղասպանությունը, քանի որ սրանք հանդիսանում են ցեղասպանության փաստը ժխտող կամ կասկածի տակ դնող անձինք, կուզենայի տեսնել առաջին կալանվածին:

որեւէ այլ մենագրություն: Կարծում եմ, որ ինքը որեւէ հուշագրություն չի կարդացել, որ հասկանար, թե ինչ է ցեղասպանությունը:

- Ամեն օր իշխանությունն անսպասելի հայտարարություններ է անում: Ի՞նչ վատթարագույն բան կարելի է սպասել այս իշխանություններից:

- Սրանց հետ արդեն ամեն բան պարզ է, ես ակնկալիք ունեմ մեր քաղաքացիներից՝ քաղաքացիների հաշտվողականության, ծախվածության, սուտը ճշտի տեղ ընդունելը, խաբված լինելը բնական վիճակ համարելուց: Օրինակ, 8 տարի առաջ՝ ապրիլին, սկսվեց խաբեության փուլը: Մենք դեռ ապրում ենք մարդկանց կողքին, ովքեր լավ են զգում՝ գիտակցելով, որ իրենց խաբել են: Այսինքն, խաբեության մեծ կրկեսային ծրագիր է բեմադրվել Երեւանում, շատերը դրանից գոհ են նրա համար, որ կրկեսը լավ է, եւ չեն ուզում հարց տալ՝ խաբվա՞ել են, թե՞ չեն խաբվել, մնացածների համար ֆինանսական եւ սովորական ապրելակերպի բարելավման հարցեր են լուծում:

- Ի՞նչ եք կարծում՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի նախագահները կժամանե՞ն Երեւան՝ մայիսի 4-ին կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին մասնակցելու համար:

- Ես չեմ ուզում ենթադրություն անել, եթե ենթադրություն եք ուզում՝ հուշարձանի վերականգնման հետ կապված, գուցե փորձեն ձգել կամ ինչ-որ պատճառաբանություններ անել, որ չգան կամ ամբողջ անձնակազմով չգան: Այսինքն՝ պետական արարողակարգը խախտեն՝ հանուն Ադրբեջանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների: Դա իմ ենթադրություն է:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԱՎՈՒՇ ԱՄՐՈՑԸ ՔԱՆԴՎՈՒՄ Է

Ապրիլի 19-ին «Բերդի մշակույթի կենտրոն» կազմակերպությունը համացանցում «Տավուշի բերդը՝ կործանման եզրին» վերնագրով հրապարակում էր արել, որտեղ նշված է. «Այսօր հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրն է: Սակայն այս օրը շնորհավորելու փոխարեն ստիպված ենք բարձրաձայնել մի անընդունելի իրականություն: Տարիներ առաջ ամրոցի տարածքում իրականացված պեղումների արդյունքում ամբողջությամբ հեռացվեց այն հողի շերտը, որը դարեր շարունակ ապահովել էր բերդի կայունությունը: Այդ քայլից հետո, սակայն, որեւէ լուրջ ամրակայման աշխատանք չի իրականացվել: Արդյունքն այսօր տեսանելի է բոլորին. անձրեւները, քամիներն ու կլիմայական ազդեցություններն անխնա քայքայում են բերդի մնացորդները՝ մեր աչքի առաջ ոչնչացնելով պատմական արժեքը: Սա արդեն պարզապես անուշադրություն չէ: Սա պատասխանատվության բացակայություն է: Տավուշի բերդը մեր պատմության խորհրդանիշներից է, որի անունով կոչվում է ողջ մարզը: Եվ այսօր այդ խորհրդանիշը թողնված է ճակատագրի քմահաճույքին: Իրավասու կառույցներին ուղղված հարցը հստակ է՝ ինչքա՞ն պետք է շարունակվի այս անգործությունը, եւ ո՞վ է պատասխանատվություն կրելու այս կորստի համար»:

Այդ գրառումը «թեգ» է արված Բերդի համայնքապետարանին, Տավուշի մարզպետարանին, ԿԳՄՍՆ-ին, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին եւ այլ կազմակերպությունների: 2023թ. Տիգրան Ալեքսանյանի ղեկավարությամբ Տավուշ ամրոցում հնագիտական պեղումներ են կատարվել, հայտնաբերվել են արժեքավոր գտածոներ, որոնց մի մասը զետեղվել է Բերդ քաղաքի երկրագիտական թանգարանում: Կատարված հնագիտական պեղումները հնարավորություն են տվել կազմելու Տավուշ ամրոցի եւ ամրոցի լանջին գտնվող փոքր Սուրբ Աստվածածին եկեղեցու ամրակայման եւ վերականգնման աշխատանքների նախագիծ: Նախագծով աշխատանքների արժեքը սահմանվել է 186 միլիոն դրամ: 2025թ. նոյեմբերի 20-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկատվական հարցում եմ արել. «ԿԳՄՍ նախարարությունը մտադի՞ր է առաջիկայում շինարարական ընկերությունների հետ համագործակցելով՝ այդ աշխատանքների նոր մրցույթ հայտարարել: Տավուշ բերդի եւ եկեղեցու վերականգնման համար ո՞ր թվականներին, քանի՞ անգամ է մրցույթ հայտարարվել, դրանց վերականգնման համար ԿԳՄՍՆ-ի նախատեսած 186 միլիոնն անբավարար չէ՞ դժվարին, բարձրադիր տեղանքում մասնագիտական բնույթի մեծածավալ աշխատանքների համար, այդ պատճառո՞վ չեն կայանում մրցույթները»:

ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ ամրոցի պարսպապատերի, կից կառույցների, եկեղեցու ամրակայման, վերականգնման եւ տարածքի մասնակի բարեկարգման շինարարական աշխատանքների համար 4 անգամ մրցույթ է հայտարարվել 2024 թվականին եւ եւս 4-ը՝ 2025 թվականին: Նշյալ մրցույթներին ներկայացված գումարը սահմանվել է՝ համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթներում հայտեր չեն ներկայացվել, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է վերանայել նախահաշիվը»:

Նախագիծ եւ նախահաշիվ կազմողները չե՞ն հասկացել, որ վերականգնողական, շինարարական աշխատանքները կատարվելու են բարձրադիր, դժվարամատչելի տեղանքում, որտեղ էլեկտրական հոսանքի գիծ չկա, ջուր, ցեմենտ, ավազ, շինարարական այլ նյութերն ամրոց հասցնելու համար պետք է բարձունք տանող ճանապարհ կառուցել: Ամրոցի, եկեղեցու վերականգնումը սովորական օբյեկտի շինարարություն չէ, այլ՝ մասնագիտական աշխատանք, ուստի պետք էր խորհրդակցել պատմական, մշակույթի հուշարձանների վերականգնողական աշխատանքներով մասնագիտացած կազմակերպությունների հետ: 3 տարի առաջ պեղումներ են արվել, որից հետո պետք է ամրակայման աշխատանքներ արվեին, որպեսզի ամրոցի կառույցների փլուզումներ չլինեն:

ԿԳՄՍ նախարարության աղբյուրից տեղեկացա, որ նախարարությունը նախատեսում է ավելացնել ծրագրի նախահաշիվը. Տավուշ ամրոցի եւ ամրոցի լանջին գտվող փոքր Սուրբ Աստվածածին եկեղեցու ամրակայման եւ վերականգնման աշխատանքների համար ի սկզբանե նախատեսված 186 միլիոն դրամին ավելացնել եւս 70-80 միլիոն դրամ եւ նոր մրցույթ հայտարարել: Սակայն ամրոցը չի սպասում՝ ժամանակի ընթացքում քանդվում է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՉԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ



Հայկական մի հին ասացվածք կա. «Ներսը՝ սատանա. դուրսը՝ քահանա...»: Լավագույն օրինակը մեր այսօրվա իշխանապետն է: Մեզ վախեցնում է պատերազմով, իսկ մեր հարեւանի սիրտն ուզում է գրավել «սրտիկ» սիմվոլիկաներով, կանաչ ճանապարհ բացելով նրա առաջ: Այն էլ այնպիսի մի հարեւանի, որը, ի տես սրանց քարոզած կրավորական խաղաղասիրական կոչերին, ոգեւորությունից գլուխը կորցրած, Հայաստանը դիտում է՝ ոչ ավել, ոչ պակաս, «Արեւմտյան Ադրբեջան»: Նա, իհարկե, այդպիսի հիմարաբանություններ ասել է նաեւ Իրանի Ադրբեջան նահանգի վերաբերյալ՝ այն կոչելով «Հարավային Ադրբեջան»...

Երկրորդ աշխարհամարտի նախօրեին Ստալինը Հիտլերի հետ կնքած խաղաղության պայմանագիրը հիմք ընդունելով՝ երկար ժամանակ չէր հավատում այն զեկույցներին, որ նացիստական զորքերն արդեն հատել են Սովետական Միության սահմանը: Բռնակալների ախորժակը ո՛չ պայմանագիր է ճանաչում, ո՛չ էլ բարիդրացիական հարաբերություններ: Նրանց նկրտումներն ավելի են ճոխանում, հատկապես՝ հեշտությամբ ձեռք բերված առաջին հաղթանակներից հետո: Այնպես որ, մեր ներկա իշխանավորների այս կարգի քարոզչությունը ոչ թե խաղաղասիրական մնայուն կամ հուսալի հայեցակարգ է, այլ էժանագին հնարք՝ ժողովրդին ահաբեկելով հավելյալ քվեներ կորզելու նպատակով, ուրիշ ոչինչ...

Իրանի ժողովուրդը ցավով է հիշում իր անցյալի թագավորներից մեկին՝ 18-րդ դարի շահ Սուլթան Հուսեյնին ու նրա քարոզած ապուշ խաղաղասիրությունը: Նրա օրոք հարեւան Աֆղանստանի ղեկավար Մահմուդ Աֆղանը, տեսնելով նրա ապիկարությունները, ձեռնարկեց հարձակում Իրանի դեմ: Պատմաբանների վկայությամբ, ամեն անգամ, երբ թագավորին հաղորդում էին թշնամու՝ նահանգ առ նահանգ դեպի մայրաքաղաք Իսպահան առաջանալու լուրը, նա ընդամենը խորհուրդ էր տալիս՝ հեռու մնալ պատերազմելուց եւ դիմադրություն ցույց տալուց՝ ասելով, որ պետք է բավարարվել նրանով, ինչ ունեն: Մինչեւ որ թշնամին հասավ նրա պալատի դռներին: Շահ Սուլթան Հուսեյնը ստիպված «մեծահոգաբար» վերցրեց իր գլխի թագն ու դրեց թշնամու գլխին՝ ասելով. «...Եղբայր, ես կռիվ չունեմ տալու, այս թագը մինչեւ հիմա իմ գլխին էր, թող այսուհետ քո գլխին լինի, ի՞նչ է եղել որ, բոլորս էլ Աստծո ստեղծած խաղաղասեր մարդիկ ենք...»: Եվ նա դարձավ Շահ Աբաս Մեծի ապիկար ժառանգորդն ու պատմության գիրկն անցավ որպես Իրանի անարժան թագավորներից մեկը: Իսկ երկիրն ամբողջ 12 տարի հանձնվեց աֆղան հրոսակների քմահաճույքին:

Բռնակալներն այդպես են: Հեշտությամբ ձեռք բերված հաղթանակը նրանց հղփացնում է: Նույն ախտով էլ տառապում է մեր այսօրվա իշխանավորը: Նախորդ անգամ վերընտրվելն այնքան է ոգեւորել նրան, որ կարծում է, թե այս անգամ էլ նույնն է լինելու: Թեեւ կողքից նրան հիշեցնողներ կլինեն, որ դա ընտրություն չէր, այլ ժողովրդի մեծամասնության կողմից չընտրություն էր՝ ընդամենը 25 տոկոսով վերընտրվեցին: Նա հույս ունի, որ այս անգամ էլ պատերազմի սարսափով կհաջողի նույն չընտրողներին տանը պահել, իսկ իր աջակիցները, եթե համարենք, որ նույն քանակի են (իսկ բավարար տեղեկություն կա, որ դա այդպես չէ), անպայման մեջտեղ են իջնելու:

Մեզնից յուրաքանչյուրը պետք է հասկանա եւ ընդունի, որ երկրի ապագան վերացական գաղափար չէ. այն ձեւավորվում է հենց այսօր՝ մեզնից յուրաքանչյուրի ընտրությամբ, մասնակցությամբ ու անտարբեր չլինելու կամքով: Երբ մենք գիտակցաբար ենք մոտենում մեր որոշումներին, հասկանում ենք, որ յուրաքանչյուր ձայն արժեք ունի եւ կարող է ազդեցություն ունենալ վաղվա իրականության վրա: Այդ պատճառով կարեւոր է չմնալ կողքից դիտորդ, այլ լինել գործընթացի ակտիվ մասնակից: Գնալ ընտրության, հստակ արտահայտել մեր դիրքորոշումը եւ տեր կանգնել մեր ձայնին՝ նշանակում է պատասխանատվություն կրել մեր երկրի ապագայի համար:

Վահան ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կշերմանա՞ն Մոսկվա-Բաքու հարաբերությունները

Ապրիլի 15-ին Ռուսաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որը վերաբերում էր AZAL-ի օդանավի կործանման դեպքին: Մոսկվան ու Բաքուն արձանագրեցին, որ զոհվածների ընտանիքներին կվճարվի փոխհատուցում: Կոնկրետ գումարներ չեն նշվում: Սակայն, ինչպես գրում է Սերգեյ Մարկեդոնովը, այդ հայտարարությունում այլ բան է կարեւոր. Մոսկվան ու Բաքուն կարողացան փոխզիջման հանգել վիճելի հարցի շուրջ: Կարելի է ենթադրել, որ առաջիկայում ռուս-ադրբեջանական հարաբերություններում դրական տեղաշարժեր կլինեն, ինչը նկատելի է նաեւ հայտարարության որոշ ձեւակերպումներից: Մարկեդոնովը, ներկայացնելով այդ «գործի» ողջ պատմությունը, հռետորական հարց է տալիս՝ հիմա, երբ «գործը», կարելի է ասել, փակված է, արդյո՞ք Մոսկվա-Բաքու հարաբերությունները կսկսեն ջերմանալ: «Կուզենայինք այդ հարցին միանշանակ եւ դրական պատասխանել: Սակայն կան բավականին շատ նյուանսներ»,- գրում է նա: Ադրբեջանական օդանավի խոցման դեպքը՝ իր ողջ կարեւորությամբ հանդերձ, միակ խնդիրը չէ, որի պատճառով հարաբերությունները Մոսկվայի եւ Բաքվի միջեւ «սառեցվել էին»: Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի, Մերձավոր Արեւելքի եւ, առհասարակ, եվրասիական իրադրությունը ներկայում զարգանում է չափազանց արագ: Այդ ռեգիոնների երկրների դերերն արագ փոխվում են: Որոշների հնարավորություններն աճում են, որոշներինը՝ նվազում: Եվ հայացքների ու մոտեցումների տարբերություններից ու տարաձայնություններից որեւէ մեկն ապահովագրված չէ: Սակայն կարեւոր է մի բան. քաղաքական կամքի առկայությունը՝ ցանկացած, նույնիսկ ամենասուր քաղաքական ճգնաժամը հաղթահարելու՝ եզրակացնում է Մարկեդոնովը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 21.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆԻԿՈԼԻ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹԵ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ, ԱՅԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ Է

Երբ հետեւում ես Նիկոլ Փաշինյանի խոսույթին ու գործին, ակամայից հասկանում ես, որ այս մարդն այլեւս ոչ թե իրականությունը ճիշտ կարդալու, այլ նաեւ ճիշտ հասկանալու խնդիր ունի: Եվ հարցն այս իմաստով ամենեւին էլ այն չէ, որ նրան շարունակում է թվալ, թե ժողովուրդն իր համախոհն է, այլ այն է, որ նա շարունակում է չհասկանալ, որ այսօրվա Հայաստանում իր ընդդիմությունն այլեւս ո՛չ Սամվել Կարապետյանը, ո՛չ Ռոբերտ Քոչարյանը, ո՛չ Գագիկ Ծառուկյանը եւ ո՛չ էլ մեկ ուրիշը չէ: Իր ընդդիմությունն այսօրվա Հայաստանում Հայաստանի քաղաքացին է:

Եվ, այս իմաստով, եթե իրեն թվում է, թե այսօրվա Հայաստանում իրեն կհաջողվի՝ իր հետքայլ անելու հնարավորություն չունենալը Հայաստանի վրա «մինչեւ վերջ գնացողի» գնով վաճառել, ապա ինքը չարաչար սխալվում է: Սխալվում է, որովհետեւ այսօրվա Հայաստանում հետքայլ անելու հնարավորություն ոչ միայն ինքը, այլ նաեւ այս երկիրը չունի: Ու, անկախ հետքայլ անելու իր հնարավորություն չունենալուց եւ Հայաստանի քաղաքացու վրա մինչեւ վերջ գնացողի գնով վաճառելու իր ցանկությունից, դա անել նրան՝ այս անգամ արդեն չի հաջողվի:

Չի հաջողվի, որովհետեւ իր կառավարման այս ութ տարիներին ժողովուրդն ու երկրի քաղաքացին այնքան են տեսել իր մինչեւ վերջ գնալու սկսվելն ու ավարտը, որ հիմա, առանց հատուկ ջանք գործադրելու էլ, կարող են ցույց տալ իր՝ մինչեւ վերջ գնալու թե՛ սկիզբը եւ թե՛ վերջը:

Եվս մի հանգամանք, որին չանդրադառնալ չենք կարող: Հարցն այն է, որ Նիկոլի ու իր խմբակի խոսույթի հիմնական գաղափարն այն է, թե Հայաստանի բոլոր խնդիրներն ու մարտահրավերը ոչ թե Հայաստանի թույլ լինելուց, այլ քաղաքականությունից ու նրան վերաբերող աշխարհաքաղաքականությունից են գալիս: Այնինչ, այս երկրի մարտահրավերներն ու խնդիրները ո՛չ քաղաքականությունից եւ ո՛չ էլ աշխարհաքաղաքականությունից չեն գալիս: Դրանք քաղաքականությունն ու աշխարհաքաղաքականությունը երկրի տնտեսական ու պաշտպանական պոտենցիալին հակադրելուց են գալիս:

Այս առումով, անկախ նրանից, թե Նիկոլն ինչքան շատ կխոսի անվտանգությունից, տարածքային ամբողջականությունից ու ինքնիշխանությունից, միեւնույն է, քանի դեռ մենք չենք սովորել այս երկրի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու պաշտպանունակությունը չհակադրել քաղաքականությանն ու աշխարհաքաղաքականությանը, այս երկիրը ո՛չ իր տարածքային ամբողջականությունն ապահովող, ո՛չ իր անվտանգությունը երաշխավորող եւ ո՛չ էլ ինքնիշխան երկիր չի լինի: Այն ինչպես եղել, այնպես էլ կշարունակի աշխարհաքաղաքական հանգամանքներից ու թշնամու ողորմածությունից կախված երկիր լինել:

Այս առումով, քանի դեռ մենք չենք սովորել երկիրն այս վիճակից դուրս բերելու գործը ոչ թե հայության ու Հայաստանի տնտեսական ու պաշտպանական պոտենցիալն աշխարհաքաղաքականության ու քաղաքականության հետ համադրողներին, այլ դրանք իրար հակադրողներին վստահել, մենք ո՛չ մեզ եւ ո՛չ էլ այս երկիրը չենք փոխի:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am